Ազգ
Azg
armenian daily

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1994 ՇԱԲԱԹ # 208 (711)

Պոլսահայ համայնքի անդամները սպառնալիքներ են ստանում

Ստամբուլից հոկտեմբերի 26-ին «Ֆրանս պրես» գործակալությանը տրված հաղորդման համաձայն, Թուրքիայի Հայոց պատրիարքարանը չորեքշաբթի երեկոյան Թուրքիայի նախագահի եւ վարչապետի ուշադրությունը բեւեռել է այն սպառնալիքի նամակների վրա, որոնք վերջերս Ստամբուլում ստացել էին հայ համայնքի բազմաթիվ անդամներ: Գործակալության ստացած գրության մեջ պատրիարքարանն ընդգծում է, որ այդ նամակները կրում են ծայրահեղ ազգայնական Ալփարսլան Թյուրքեշի Ազգային շարժում կուսակցության հատուկ մի ընկերության ստորագրությունը:

Թուրքիայի Հայոց պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը (շուրջ 50 հազար հայերի մեծ մասն ապրում է Ստամբուլում) Թուրքիայի իշխանություններին հղած ուղերձներում հայտարարել է, որ այդ նամակները մեծացրել են իր համայնքի անհանգստությունը, որն արդեն իսկ վրդովված է անջատական ՔԲԿ-ի եւ հայերի, ինչպես նաեւ նրանց եկեղեցու կապերին առնչվող անհիմն մեղադրանքներից:

ԱՆԾՈՒԽԱՐԾ

ՀՀ ԳԽ պատվիրակությունը մեկնեց Սանկտ Պետերբուրգ

ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի հինգերորդ լիագումար նիստի աշխատանքներին մասնակցելու համար հոկտեմբերի 28-ին Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը՝ ԳԽ առաջին փոխնախագահ Արա Սահակյանի գլխավորությամբ, մեկնեց Սանկտ Պետերբուրգ:

ԳԽ մամուլի կենտրոնից «Ազգին» տեղեկացրին, որ խորհրդի նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, ընդգրկված են նաեւ «ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խաղաղարար գործողությունների մասին» միջխորհրդարանական վեհաժողովի որոշման կատարման ընթացքի, «ԱՊՀ մասնակից պետությունների նկատմամբ ուժի ցուցադրման անթույլատրելիության մասին» դիմումի, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի կանոնակարգի, ԱՊՀ մասնակից երկրների քաղաքացիների սոցիալական իրավունքների եւ երաշխիքների խարտիայի մասին հարցերը:

Արմենպրես

Սեւծովյան համագործակցություն

Նոյեմբերի 10-11-ը գիտության բնագավառի հանդիպում Երեւանում

Նոյեմբերի 10-11-ը Երեւանում կկայանա Սեւծովյան տնտեսական համագործակցության «Գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառի» աշխատանքային խմբի առաջին խորհրդակցությունը: Ինչպես տեղեկացրեց փորձագետների խմբի ղեկավար Արամ Տարախչյանը, այս խորհրդակցությունը որոշիչ նշանակություն կունենա տվյալ բնագավառի հետագա աշխատանքների համար: Խորհրդակցությանը կմասնակցեն Ռուսաստանի, Ուկրաինայի, Թուրքիայի, Հունաստանի, Ալբանիայի, Բուլղարիայի, Մոլդովայի, Վրաստանի ներկայացուցիչները: Նախատեսվում է խորհրդակցության ընթացքում մշակել համատեղ գիտական ծրագրեր, քննարկել դրանց ֆինանսավորման, գիտական համագործակցության համակարգման մարմնի կազմակերպման հարցեր: Բացի այդ, կքննարկվեն տեխնոլոգիաների տեղեկատվական համակարգի ստեղծման հնարավորությունները, ինվեստիցիոն ֆոնդերի ստեղծման խնդիրը:

ՓԱՍՏ

Բուտրոս-Ղալի. «Վստահության ճգնաժամ» ՄԱԿ-ի հանդեպ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բեռլինի պատի փլուզումը եւ «սառը պատերազմի» ավարտը խաղաղության կարճատեւ խանդավառության հորձանքից հետո առաջացրին ապագայի հանդեպ անվստահության զգացում, եւ դա հանգեցրեց ՄԱԿ-ի նկատմամբ «վստահության ճգնաժամի»: Այսօր Ռումինիայի խորհրդարանում ելույթ ունենալով, այդ մասին հայտարարեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին, որն այդ երկրում է գտնվում Ռումինիայի կառավարության հրավերով: «Ուստի հարկավոր է խորհել միջազգային կազմակերպությունների հեռանկարների մասին եւ աշխատել կոլեկտիվ կյանքի նոր նախագծի» վրա, ասաց Բուտրոս Ղալին:

ԱԴՐԲԵՋԱՆ

Մութալիբովն ու Հուսեյնովը պատրաստում են նոր հեղաշրջում

Հոկտեմբերի 25-ին տեղի է ունեցել Միլլի մեջլիսի հերթական նիստը: Ցերեկային նիստի վերջում Ռ. Գուլիեւը հայտարարել է, որ Ադրբեջանի [illegible] ներկայացված են 4 մարդ, նախկին նախագահ Այազ Մութալիբովը, ԱՄՆ հատուկ [illegible] փախած պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Ղազիեւն ու ինքնահռչակ Թալիշ-Մուղանի հանրապետության «նախագահ» Ալիքրամ Գումբատովը, ինչպես նաեւ նախկին վարչապետ Սուրեթ Հուսեյնովը: Խորհրդարանի խոսնակն ասել է, որ այս 4-ը Ադրբեջանի դեմ առել են ձեռք ձեռքի տված: Նա նշել է, որ Ալիքրամ Գումբատովը ուղերձներ է հղել իր կողմնակիցներին, որտեղ նրանց [illegible] պետական կառույցներ, զավթել զինվորական [illegible]: Այսպես կոչված Թալիշ-Մուղանի հանրապետության նախկին ղեկավարը շփումներ ունի նաեւ քաղաքական կուսակցությունների հետ, եւ խոսնակը խոստացել մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել, թե դրանք ինչ կուսակցություններ են եւ հայտնել:

Գուլիեւը հայտնել է նաեւ, որ Ղազիեւը ուղարկում է իր գործակալներին որոշ զինվորական ստորաբաժանումների հրամանատարների մոտ իր կողմը գրավելու նպատակով:

«Ազատություն» ռադիոկայանի Բաքվի թղթակցի հոկտեմբերի 25-ի հաղորդման համաձայն, խոսնակը շարադրել է ուղերձի էությունը, որը Ալիքրամ Գումբատովի կողմից ուղարկվել է իր կողմնակիցներին եւ ակներեւաբար հայթայթվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից: «Դուք պետք է արտակարգ զգոնություն ցուցաբերեք եւ ցույց տաք, թե իբր պաշտպանում եք պաշտոնական ղեկավարությանը», ասված է ուղերձում:

Այնուհետեւ Ալիքրամ Գումբատովը իր կողմնակիցներին խորհուրդ է տալիս շարունակել Թալիշ-Մուղանի հանրապետության ստեղծման գաղափարի քարոզչական աշխատանքը եւ պատրաստվել քաղաքական ռեժիմի փոփոխություններին:

Ըստ խոսնակի, Ղազիեւն իր գործակալներին ուղարկում է [illegible], զինվորական ստորաբաժանումներ նրանց հրամանատարներին անհրաժեշտության դեպքում նոր հեղաշրջման աջակցությունը հավելելու նպատակով: ԵՏ

ՄԵԴԻԱ

Լրագրողները պահանջում են ապահով պայմաններ հասարակության ծառայելու իրենց գործում

Չորեքշաբթի օրը խմբագիրների եւ լրագրողների խորհրդակցության ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, երեկ «Ազգի» խմբագրատանը հավաքվեցին թերթերի ու զանգվածային լրատվության մյուս միջոցների ավելի քան 20 ներկայացուցիչներ, որոնք նախապես կամ տեղում ծանոթանալով խմբագրական մարմնի կողմից վերամշակված հայտարարության նախագծին, ստորագրեցին այն: Հետագայում ստորագրողներին միացան նաեւ հանդիպմանը չմասնակցած մի շարք թերթերի ներկայացուցիչներ, եւ մինչեւ հետմիջօրեի ժամը 4-ի դրությամբ «Ազգի» խմբագրատանը ստորագրածների թիվը հասավ 21-ի, հետեւյալ շարքով՝ «Ազատամարտ» շաբաթաթերթ, «Ազատություն» ռադիոկայանի 2 թղթակից, «Ազգ» օրաթերթ, «Անկախություն» շաբաթաթերթ, «Գոլոս Արմենիի» երկօրյա, «Երկիր» օրաթերթ, «Ինտերֆաքս» լրատու գործակալության թղթակից, «Լրագիր» օրաթերթ, Հայաստանի ժուռնալիստների միության ներկայացուցիչ, «Հայլուր» լրատվական ծառայություն, «Հայք» շաբաթաթերթ, «Մունետիկ» շաբաթաթերթ, «Մախինում» շաբաթաթերթ, «Նոյան տապան» լրատվական գործակալություն, «Շրջան» շաբաթաթերթ, «Ռեսպուբլիկա Արմենիա» օրաթերթ, «Ուրարտու» շաբաթաթերթ, Ազգային հեռուստատեսության «Հանրապետություն» ստեղծագործական միավորում, «Սնարք» լրատվական գործակալություն, «Ակորդա» շաբաթաթերթ, «Փաստ» լրատվական գործակալություն: Ստորագրությունները շարունակվում են:

Հավաքի մասնակիցները անդրադարձան նաեւ լրագրողների անկախ արհեստակցական միություն ստեղծելու հարցին: Եղան բազմաթիվ առաջարկներ, դարձվեցին տեսակետներ, եւ ի վերջո որոշվեց բանաձեւված տեսակետներն ու առաջարկները գրավոր շրջաբերականի ձեւով առաջիկա շաբաթ փոխանցել հանրապետությունում կանոնավոր գործող թերթերի, լրատվական գործակալությունների եւ լրատվական մյուս միջոցների խմբագիրներին կամ տնօրեններին եւ նրանց հրավիրել մեկ այլ նիստի, համապատասխան ներկայացուցչական մարմին եւ հետագա աշխատանքների հիմք ստեղծելու նպատակով:

Զանգվածային լրատվական միջոցների համատեղ հայտարարությունը

Հայաստանի Հանրապետությունում հաճախակի են դարձել զանգվածային լրատվական միջոցների եւ մամուլի ներկայացուցիչների դեմ կատարված բռնությունները եւ վանդալիզմի դեպքեր: Հայտնի փաստերից են հեռուստալրագրող Արամ Աբրահամյանին ծեծելը, «Ուրբաթ» շաբաթաթերթի խմբագրատան հրկիզումը, «Ազգ» օրաթերթի խմբագրության հրկիզման փորձերը, «Գոլոս Արմենիի» թերթի խմբագրության եւ «Հայլուր» լրատվական գործակալության Գյումրիի գրասենյակի ավերումները, «Ուրարտու» շաբաթաթերթի խմբագրության անօրինական ներխուժումը եւ սպառնալիքները, ՀՀ հեռուստատեսության տեխնիկական տեղեկատու հաղորդաշարի դեմ բռնությունները եւ այլ դեպքեր:

Մենք՝ ներքոստորագրյալներս, Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներս, վճռականորեն դատապարտում ենք այն բռնարարքները, որոնք նպատակ են հետապնդում ճնշել ամեն տեսակի բազմակարծություն եւ խոսքի ազատություն: Հայաստանի նախագահից եւ իրավապահ մարմինների ղեկավարներից պահանջում ենք վճռական միջոցառումներ ձեռնարկել լրագրողների կյանքի եւ անվտանգության պաշտպանության նպատակով, ինչպես նաեւ ապահովել զանգվածային լրատվական միջոցների անխափան աշխատանքը:

Խիստ բողոք հայտնելով մամուլի դեմ ուղղված բռնության փաստերի եւ իրավապահ մարմինների անգործության կապակցությամբ, հիշեցնում ենք, որ Հայաստանի ղեկավարների ստորագրությունն առկա է միջազգային հիմնական բազմաթիվ փաստաթղթերի ներքո, որոնց համաձայն երաշխավորվում են նաեւ զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների պաշտպանված լինելու իրավունքը: Այդ առումով Հայաստանի լրագրողները հուսով են, որ երկրի ղեկավարությունը, ստանձնելով այդ միջազգային պարտավորությունները, վճռական միջոցներ կձեռնարկի մարդու իրավունքների եւ խոսքի ազատության ապահովման համար: Դրանք չկատարելը վտանգում է Հայաստանում ժողովրդավարության հաստատումը եւ լուրջ վնաս է հասցնում մեր երկրի միջազգային հեղինակությանը:

Զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներս, գիտակցելով իրենց դերը հասարակության առջեւ, շարունակելու են կատարել իրենց մասնագիտական պարտքը, միաժամանակ իշխանություններից պահանջելով համապատասխան դաշտ ապահովել [illegible] եւ ղեկավարության, եւ հասարակության համար այդ կարեւոր ոլորտի անխափան գործունեության:

ՀԵՏԱՔԻՐ

ԱՄՆ-ում 1 միլիոն բանտարկյալ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, WSJ: Պատմության մեջ առաջին անգամ Մ. Նահանգներում բանտարկվածների թիվն անցավ 1 միլիոնի սահմանը: Դրանցից 919.143-ը գտնվում են նահանգային, իսկ 93708-ը՝ դաշնակցային գաղութներում, ըստ ամերիկյան արդարադատության նախարարության տվյալների:

Պենտագոնը 24 օդանավ ուղարկեց Քուվեյթ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, WSJ: ԱՄՆ պաշտպանության նախարարության որոշմամբ, 24 հատ A 10 տիպի կործանիչ է ուղարկել Քուվեյթ, բացի այն հարյուրավոր հրասայլերից ու մարտակառքերից, որոնք Պենտագոնն արդեն տրամադրել է Քուվեյթին եւ Կատարին, որպես կանխարգելիչ քայլ Իրաքի որեւէ հարձակման դեմ:

Խոլերա՞ Իտալիայում

ՀՌՈՄ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իտալիայի նախարարների խորհուրդը որոշում ընդունեց խոլերայի համաճարակի ծագման վտանգի կապակցությամբ արտակարգ դրության ռեժիմ հաստատել երկրի հարավում գտնվող Ապուլիայի մարզում:

ԱՊՀ

Վրաստանը կանգնած է զանգվածային սովի շեմին

Վրաստանի առնվազն 483 հազար բնակիչ սովի է մատնված եւ առանց արտասահմանից ցույց տրվող մարդասիրական օգնության, կարող է աղետալի վիճակում հայտնվել: Այս տվյալներն է բերում Թբիլիսիում գտնվող Միավորված ազգերի կազմակերպության տարբեր Համաշխարհային պարենային ծրագրի ներկայացուցչությունը: Ինչպես Թբիլիսիից հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակիցը, այժմ Վրաստանի չքավոր բնակչությունը, որը մտնում է վերոհիշյալ 483 հազարի մեջ, ստանում է մինչեւ 20 կիլոգրամանոց այսպես կոչված «բնատնեկան ծանրոցներ»: Ինչպես նշում է ՄԱԿ-ի կազմակերպության ներկայացուցչությունը, պարենային մարդասիրական օգնության ստացումը հանրապետություն կատարվում է ռիթմիկ եւ [illegible] կերպով: Այն ստացվում է ծովով սեւծովյան Բաթում եւ Փոթի նավահանգիստների միջոցով եւ Թուրքիայով անցնող ավտոճանապարհային տրանսպորտով: Սակայն Վրաստանի արհմիությունների տվյալներով, Վրաստանում չքավորների իրական թիվը անհամեմատ մեծ է ներկայացված 483 հազարից եւ ամենայն հավանականությամբ կազմում է բնակչության 90 տոկոսը:

Արմենպրես

Ռուսաստանը պատրաստ է երկարաձգել Ուկրաինայի պարտքերը

Ռուսաստանի ԱԳՆ նախարար Անդրեյ Կոզիրեւը, հոկտեմբերի 28-ին ելույթ ունենալով Վիեննայում բացված «գործակցություն Ուկրաինայի տնտեսական բարեփոխումների նպատակով» միջազգային խորհրդաժողովում, ասել է. «Ուկրաինայի տնտեսության վերածնունդը կարեւոր կլինի ԱՊՀ-ի համար, Ռուսաստանը Ուկրաինայի գլխավոր գործընկերն է, նրան կենսականորեն կարեւոր էներգիայի աղբյուրներով ապահովելու տեսակետից»: Ըստ Կոզիրեւի, Ռուսաստանը պատրաստ է ընդունելի կարգով մինչեւ 1995 թ. փետրվարի 1-ը երկարաձգել Ուկրաինայի պարտքերը, որոնք ենթակա էին վճարման այս տարվա ընթացքում:

Արմենպրես

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՌԱԿ

Եւս երկու ակումբ Գյումրիում

Հոկտեմբերի 24-ին Գյումրիի Շիրակի շրջանում ՌԱԿ նորագիրների երդմնառության արարողությունից հետո տեղի ունեցած հիմնադիր ժողովներում հիմնադրվեցին երկու նոր ՌԱԿ ակումբներ:

Ժողովին ներկա էին եւ ելույթներ ունեցան ՌԱԿ Հանրապետական վարչության անդամ, Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչության ատենապետ Սոֆիա Թորոսյանը, ՀՌԱԿ ՀԿ գրասենյակի վարիչ Վաչագան Գալստյանը, Թեքեյան մշակութային միության ներկայացուցիչ Եղիա Գալոյանը եւ Գյումրիում ՌԱԿ գործիչ Անտոն Փիլոյանը: Վերջինս հավաստիացրեց, որ ակումբները լավագույնս կնպաստեն Գյումրիում Ռամկավար ազատական կուսակցության ծրագրերի իրականացմանը եւ ժողովրդավարական գաղափարների տարածմանը:

Ներման հանձնաժողովը կգործի մինչեւ նոյեմբերի 15-ը

1994 թ. հոկտեմբերի 13-ի թիվ 487 որոշմամբ ստեղծվել է զինծառայությունից խուսափելու եւ դասալքության դեմ տարվող աշխատանքների կոորդինացիոն կենտրոնական հանձնաժողով: ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կազմակերպչական-զորահավաքային գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ գնդապետ Լեւոն Կարապետյանը «Նոյյան տապան» գործակալության թղթակցին ասաց, որ հանձնաժողովը կարելի է դիտել որպես ներման հանձնաժողով, որը զբաղվում է միայն զինծառայությունից խուսափելու, դասալքության դեմ տարվող աշխատանքներով: «Մինչեւ այսօր շատ դասալիքներ են ներկայացել, զղջալով իրենց արարքի համար», ասաց Լ. Կարապետյանը: Հանձնաժողովի նախագահ, պետնախարար Վազգեն Սարգսյանի որոշմամբ նրանք բոլորը տեղափոխվել են երեւանի գնդերից մեկը, որից հետո համապատասխան զորամասեր:

Կան մեծ թվով դասալիքներ, որոնք զանազան հիվանդությունների պատճառով տեղավորվել են հոսպիտալներում կամ քաղաքացիական հիվանդանոցներում: ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական վարչության կողմից արդեն ստուգված բժշկական տեղեկանքների հիման վրա հանձնաժողովը, բոլոր դեպքերը կասարելուց հետո, նրանց նկատմամբ նույնպես որոշում է ընդունում` շարունակելու՞ են նրանք ծառայությունը, թե ազատվելու են հիվանդության պատճառով: Լ. Կարապետյանը արդարացված համարեց հանձնաժողովի ստեղծումը եւ տեղեկացրեց, որ այն գործելու է մինչեւ նոյեմբերի 15-ը: ՆՏ

1994 թվականին ՄԱԿ-ի համաշխարհային պարենային ծրագրի կողմից Հայաստան ուղարկվող մարդասիրական օգնությունը կկազմի 10617 տոննա, որը ՀԳՄ-ի միջոցով հասկացվող եւ դոնոր երկրների կողմից նախատեսված 14728 տոննա պարենային օգնության 72 տոկոսն է: Մնացած օգնությունը կազմակերպելու նպատակով, հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի ՀԳՄ-ի եւ վրացական երկաթուղու միջեւ կնքվեց ռուսական երկաթուղուց 10 հիմնական գծի դիզելային լոկոմոտիվների վարձակալության պայմանագիր:

Դա կօգնի, առավել եւս ձմռան ամիսների ընթացքում ապահովելու

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՄԱԿ-ը շարունակում է մարդասիրական օգնությունը

Ծանրոցներ փախստականներին եւ սոցիալապես անապահով խավերին

411 տոննա պարենը կառաքվի մինչեւ տարեվերջ: Իսկ վերջերս առաքված 5003 տոննա պարենը կբաժանվի փախստականներին ու սոցիալապես անապահով խավերին: Ըստ Համաշխարհային պարենային ծրագրի տնօրեն պրն. Ընծ Ռեդասի, այդ օգնության 1375 տոննան չփաթեթավորված պարեն է, իսկ 998 տոննա ընտանեկան պարենային ծանրոցներ: Միայն 1994 թ.-ի հոկտեմբեր ամսվա առաքումը 1760 տոննան ցորենի ալյուր, 713 տոննա ոլոռ եւ 768 տոննա բուսական յուղ: Ընդ որում 700 տոննա ցորենի ալյուր եւ 675 տոննա կենդանական յուղն արդեն բաշխվել են 220777 սոցիալապես անապահով քաղաքացիների:

Պարենի երկրորդ առաքումը կազմում է 5003 տոննա, որն այս ամսվանից կբաշխվի հանրապետության 118860 փախստականների եւ 175405 հազիվոնց սոցիալապես անապահով խավերի:

Մեկ հոգուն տրվող ամսական չափաբաժինը 4,5 կգ ալյուր 1,5 կգ լոբեղեն, 750 գ բուսական յուղ եւ 300 գ շաքարավազ: Իսկ փախստականներին ցույց տրվող օգնությունը կբաշխվի 229 դեպական խանութների միջոցով:

Հիշեցնենք, որ մարդասիրական բեռների անխափան եւ արդյունավետ տեղափոխումը: Վարձակալված յուրաքանչյուր լոկոմոտիվ ՀԳՄ-ի կողմից կօգտագործվի 150 օրվա ընթացքում, որից հետո պայմանագիրը կնորոգվի: Որոշված է նաեւ 1000 տոննա դիզելային վառելիքի առաքման հարցը, որը մոտ օրերս կհասնի Բաթում: Լոգոպլի 250 հազար ամերիկյան դոլար է հատկացվել Նախանենիի կամրջի վերանորոգման համար, որին կմասնակցեն նաեւ Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը, յուրաքանչյուրի կառավարությունը հատկացնելով 50 հազարական ամերիկյան դոլար: Փաստորեն, ՀԳՄ-ի երկարացրած նախագիծը համարվում է Կովկասյան նյութատեխնիկական մատակարարման խաչուղի մի մասը, որը գտնվում է Թբիլիսիում եւ պատասխանատու է երկաթուղային տրանսպորտով այս շրջանում բեռնափոխադրումների կազմակերպման եւ համակարգման համար:

Ավելացնենք, որ 1993 թ.-ի մարտից ՀԳՄ-ի միջոցով Հայաստանին ցույց է տրվել 18.1 մլն. ամերիկյան դոլարի օգնություն, Ադրբեջանին 17.3 մլն., Վրաստանին 18.1 մլն., երկրաշարժի վերանորոգում 3.2 մլն., նավահանգստի վերանորոգում 1.2 մլն: Ա. Հ.

■ ***Համաշխարհային բանկի վարկը աղետի գոտուն:*** *Հայաստանի աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման գրասենյակի նախագահ Աշոտ Հարությունյանի տվյալներով, աղետի գոտու վերականգնման ծրագրին Համաշխարհային բանկը տրամադրել է 28 միլիոն ամերիկյան դոլար: Այս գումարը նախնական հաշվարկներով պետք է ամբողջությամբ իրացվեր մինչեւ 95 թ. վերջը: Սակայն արդեն հիմա պարզ է, որ դրանք կիրացվեն մինչեւ 96-ի կեսերը: Այսօր իրացվել է միայն 7 մլն. դոլար, որը հիմնականում ծախսվել է շինարարական գանգան կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու նպատակով: Փաստական շինարարական աշխատանքի գումարը կազմում է 2 միլիոն դոլար: Արդեն ծրագրավորվել են Գյումրիի մարզադաշտի եւ Ալեքսանդրապոլյան բաղնիքի վերականգնման աշխատանքները:* ՓԱՍՏ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԿԲ-ն թողարկել է Արցախին նվիրված հուշադրամ

ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է հերթական հուշադրամը, որ նվիրված է Արցախին: ՀՀ ԿԲ լրատվական կենտրոնից «Նոյյան տապան»

գործակալությանը հայտնեցին, որ 25 դրամ անվանական արժեքով արծաթյա հուշադրամը կշռում է 1 տրոյական ունցիա (31,1 գ), տրամագիծն է 38 մմ: Նախադրամի նման այս հուշադրամի հետ էլ կտրվի խորհրդանշական սերտիֆիկատ: Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որից ներքեւ գրված է «25 դրամ» եւ թողարկման տարեթիվը 1994: Այն եզրված է «Հայաստանի Հանրապետություն» գրությամբ: Դարձերեսին պատկերված են Արցախի ժողովրդի ազատատենչ ոգին, անհիշելի ժամանակներից եւ անպարտելի ուժը արտացոլող խորհրդանիշեր: Վերեւում գրված է Արցախ, պատկերից ներքեւ «Ազատված լեռը մեզ է»: Ողջ պատկերազարդումը վերցված է երկրաչափական շրջանակի մեջ: Պատկերներն ու գրառումները ռոմբոիդ են: Հուշադրամի եզրափորին նշված է «999» հարգադրոշմը եւ գրված է ՀՀ ԿԲ: Թողարկվել է 5000 հուշադրամ: ՆՏ

ՍՊԱՌՈՒՄ

Ծխախոտը մնում է գործարանում

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Երեւանի ծխախոտի գործարանում արտադրվող ծխախոտը հիմնականում մնում է գործարանի պահեստներում` առեւտրի կազմակերպությունների անվճարունակության հետեւանքով: Այդ առումով իրացումը կազմակերպելու համար վերջերս որոշվեց իրականացնել հայկական ծխախոտի ազատ վաճառք` հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ գործարանի արտադրանքի հիմնական սպառողը հանրապետության բնակչությունն է: Համաձայն «Հայծխախոտ» միավորումից ստացված հաղորդագրության, ներկայումս ծխախոտի գործարանը բեռնված է աշխատում ոչ միայն էներգամատակարարման, այլեւ հումքի եւ հատկապես ծխախոտաթղթի անբավարար քանակության հետեւանքով: Այնուամենայնիվ, այս տարի գործարանը արդեն հասցրել է արտադրել շուրջ 1 մլրդ. 300 մլն. տուփ հայկական ծխախոտ:

■ *Նոյեմբերից նախատեսվում է դադարեցնել միջքաղաքային ավտոբուսային երթեւեկությունը [illegible] «Հայավտո» միավորման տեղեկության [illegible]* ՓԱՍՏ

ԱՆՇՈՒԿԱՐԾ

Հանդիպում-հանրահավաք Գյումրիում

Հոկտեմբերի 19-ի տխուր եւ ցավերին հետեւող գնացող եզրակացությունների մղած միջադեպից հետո, Գյումրին ու այնտեղ տիրող իրավիճակը մի քանի օր կարծես գտնվում են ողջ հանրապետության ուշադրության կենտրոնում: Եւ անշուշտ այստեղ այսօր համընդհանուր ուշադրության արժանի շատ բան կա, ուստի նաեւ այդ տեսակետից կարելի է գնահատել Ազգային համաձայնության դաշինքի կողմից ամսի 28-ին քաղաքի Թատերական (Ազատության) հրապարակում անցկացված բազմահազարանոց հավաք հանդիպումը: Ելույթները` Հրայր Կարապետյանը, Լեւոն Գալստյանը, Դավիթ Վարդանյանը, Պարույր Հայրիկյանը, Արամ Սարգսյանը եւ ուրիշներ, մասնավորապես այն տեսակետն արտահայտեցին, թե այսօրվա իշխանությունները ընտրել են ուժային կառույցների միջոցով բնակչությանը հնազանդ պահելու, իրենց բռնատիրությունը հաստատելու ուղին, եւ հույս ունեն այդ ճանապարհով գալիք ընտրություններում հավերժացնել իրենց իշխանությունը: Այդ նպատակով, ինչպես ասվեց հանրահավաքում, նրանք ստեղծել են նաեւ անօրինական կառույցներ, որոնցից մեկը Շիրակի գոտում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչությունն է: Աղետի գոտին, ըստ ելույթ ունեցողների, երկրի այսօրվա կառավարողներին պետք է միայն ստացվող վարկերի համար... եւ նրա հիմնախնդիրները լուծելու ցանկություն չկա: Կարեւոր համարվեց հոկտեմբերի 31-ին Գյումրիի նոր քաղաքագլխի ընտրության հարցը:

Մնացած ամենը, ինչ ասվեց հանրահավաքում, հիմնականում արդեն հայտնի է: Ընթերցվեց եւ ընդունվեց բանաձեւ աղետի գոտու վերաբերյալ: Հավաքի կազմակերպիչները, փակելով այն, խոստացան վերադառնալ Գյումրի: Գ. Մ.

Մանկավարժների պահանջները շատ են, կառավարության հնարավորությունները` քիչ

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Ինչպես արդեն տեղեկացվել է, հանրապետության մանկավարժները վերջերս մի շարք պահանջներով դիմել են կառավարությանը` սպառնալով դրանք չկատարելու դեպքում նոյեմբերի 1-ից դիմել անժամկետ գործադուլի: Ի պատասխան մանկավարժների համառության, կառավարությունը կարծես թե որոշել է փոխել նախկին կոշտ դիրքորոշումը եւ գնալ զիջումների, իհարկե, միայն չնչին տոկոսներով բավարարելով նրանց պահանջները: Համաձայն ՀՀ կառավարությունից ստացված տեղեկատվության, կառավարության նախագահության նիստում որոշվել է եղած միջոցներից որոշակի մասհանում կատարել մանկավարժների համար, մասնավորապես, եռամսյակը մեկ նրանց հատկացնելով կես կիլոգրամ կարագ, մեկ կիլոգրամ շաքար եւ յոթ կիլոգրամ ալյուր: Որոշվել է յուրաքանչյուր չորրորդ ամսին տալ լրացուցիչ մեկ աշխատավարձ: Որոշակի արտոնություններ են սահմանվել նաեւ գյուղական վայրերի ուսուցիչների համար: Այնինչ մանկավարժները պահանջում են մի քանի անգամ բարձրացնել աշխատավարձը, սահմանել տրանսպորտային միջոցներից անվճար օգտվելու հնարավորություն, լուծել այլ տնտեսական հարցեր:

ԿԱՊԵՐ

Ստավրոպոլն ու Երեւանը եղբայրացան

Երեւանում անցկացվող Ստավրոպոլի մշակույթի օրերը երեկ եզրափակվեցին երկու քաղաքների միջեւ բարեկամության եւ համագործակցության վերականգնման մասին համաձայնագրի ստորագրությամբ: Այն ստորագրեցին Երեւանի քաղաքապետ Վահագն Խաչատրյանը եւ Ստավրոպոլի քաղաքապետի պաշտոնակատար Սերգեյ Շահը: Ըստ որում, համաձայնագիրը նախատեսում է ոչ միայն տնտեսատեխնիկական եւ սոցիալ մշակութային համագործակցություն, այլեւ ավելին համագործակցություն, ինֆորմացիայի փոխանակման, գիտատեխնիկական կապերի զարգացման եւ կատարելագործման: Նախատեսվում է նաեւ ստանդարտ հիմնարկ ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ տնտեսական միավորների միջեւ փոխադարձ համագործակցությունը:

Ինչպես նշեց Վահագն Խաչատրյանը, այս համաձայնագիրը նախ կխթանի երկու քաղաքների միջեւ եղած հարաբերությունները, դրանք բարձրացնելով մի նոր աստիճանի: Իր հերթին, Սերգեյ Շահը դրական խոսելով մեր հարցին, նշեց, թե միշտ էլ Ստավրոպոլում հայերի եւ ռուս բնակչության միջեւ եղել են լավ հարաբերություններ:

«Կենցաղային հողի վրա տեղի ունեցող կռիվները երբեք չպետք է ներկայացնել որպես ազգամիջյան հակամարտություն», ասաց նա, ավելացնելով, որ վերջին օրենքը, որը սահմանափակում է փախստականների մուտքը երկրամաս, վերաբերում է ոչ միայն հայերին, այլեւ Մերձբալթիկայից եւ Միջին Ասիայից տեղափոխվող ռուսալեզու քաղաքացիներին, քանի որ երկրամասն արդեն ի վիճակի չէ ընդունել բազմաթիվ գաղթականների:

Իսկ հայերի ու ստավրոպոլցիների միջեւ բարեկամության սկիզբը դրվել է դեռեւս 150-180 տարի առաջ, երբ ռուսական կայսրությունից մեկի հրամանով մեծ թվով հայեր եկան այդ երկրամաս` սահմանի պահպանության գործում աշխատելու նպատակով: Այժմ բոլոր խնդիրները լուծվում են համայնքային ղեկավարության միջոցով: Ստավրոպոլի հայ համայնքի ղեկավար Իվան Աղեկսանյանի ասելով, այժմ քաղաքում ապրում է 30-35 հազար հայ, իսկ ողջ երկրամասում 250 հազար:

Վերականգնվում է նաեւ 60-ական թվականներին ավերված հայկական եկեղեցին: Մի խոսքով, ինչպես նշեց Կովկասյան զորախմբի ատաման Պյոտր Ֆեդորովը, երեւանյան չորսօրյա հանդիպումները ավելի ամրապնդեցին իրենց կապերը, եւ առաջիկայի նկատմամբ մեծ հույսով ու լավատեսությամբ վերադառնում են Ստավրոպոլ:

«Անմոռանալի եղեր Երեւանում անցկացրած օրերի տպավորությունն է», ասաց Սերգեյ Շահը: Իսկ Վահագն Խաչատրյանը մի անգամ եւս շեշտեց, որ երկու քաղաքների եղբայրացումը նպաստելու է տնտեսական կառույցների համագործակցությանը, հատկապես ԻՄԱԿ ֆիրմայի ակտիվությանը ու դրա Աղեկսանյանի նախաձեռնությամբ:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Թողարկող եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941. AT&T (7 8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՅԱԿՈԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
[illegible]
Apple Macintosh
համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԵՐԵՎԱՆ ԱԶԳ

[illegible]

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վրաստան. Մեսխեթցի թուրքերի խնդիրը

[illegible]

ՌՈՒԶԱ ԳԱՍԳԻԳԼՅԱՆ
Պատմագիտության թեկնածու

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Լրագրողների նկատմամբ սովորական են դարձել բռնարարքները

Տաջիկստանն ամենավտանգավոր երկիրն է

Հոկտեմբերի 27-ին հակահետախուզության դաշնային ծառայության աշխատակիցների կողմից ծեծի է ենթարկվել «Վրեմյա» (НТВ ալիք) ծրագրի լրագրող Էդուարդ Պեսովը։ Ինչպես ԻՄԱ ՊՐԵՍ գործակալությանը հայտնեց տուժածը, խմբագրությունը առաջադրանք էր տվել նրան նյութ նկարահանել «Ավտոպահեստամասեր» վաճառասրահի խանութում ռումբի պայթյունի վերաբերյալ (անհայտ անձինք ժամացույցով ռումբ էին թողել շենքի առաջ, որի վնասազերծման ժամանակ զոհվել էր ՀՂԾ աշխատակիցը)։ Սակայն Սեբ. տաշինի աշխատակիցներին դուր չէր եկել լրագրողի միջամտությունը, որի պատճառով Պեսովին գցել էին գետնին եւ ծեծել անցորդների ու միլիցիայի 39-րդ բաժնի աշխատակիցների ներկայությամբ՝ ցանկանալով փշրել հեռուստախցիկը։ Լրագրողի խոսքերով, դա կլիներ իր վերջին նյութը, եթե գործին չմիջամտեր Արեւելյան օկրուգի դատախազության ներկայացուցիչը, որը խիզախորեն պաշտպանեց լրագրողին։

Ինչպես արդեն տեղեկացվել է, Թբիլիսիում սպանվել է ռուսական լրատվական գործակալության թղթակից Զաուր Գրծելիշվիլին։ Նրան սպանել են աշխատանքից տուն վերադառնալիս։ Սպանվածի դիակը հայտնաբերվել է իր տնից ոչ հեռու։ Հանցագործության վայրում գտնվել է հրազենի չոր գնդակ։ Սպանության պատասխանատվությունը որեւէ կազմակերպություն իր վրա չի վերցրել։ Հայտնի է միայն, որ վրացի լրագրողն ունեցել է տարադրամի փոխանակման կետ, ինչը վկայում է, թե սպանությունը կարող է նաեւ տնտեսական մոտիվներ ունենալ։

Վաշինգտոնից հոկտեմբերի 26-ին «Ֆրանս պրես» գործակալության հաղորդման համաձայն, Տաջիկստանն աշխարհում ամենավտանգավոր երկիրն է լրագրողների համար։ Ինչպես նշվում է Լրագրողների պաշտպանության կոմիտեի չորեքշաբթի օրը հրապարակված զեկուցագրում, այդ երկրում երկու տարում սպանվել է 26 լրագրող։

«1992 թ. մայիսից Տաջիկստանում առնվազն 26 լրագրող է սպանվել ըստ երեւույթին քաղաքական դրդապատճառներով, որոնք ուղղակիորեն առնչվում են նրանց գրչի զբաղմունքին», նշվում է զեկուցագրում։

Տաջիկստանում քաղաքացիական պատերազմը սկսվել է 1992 թվականից, իսկ նոյեմբերի 6-ին այնտեղ նախատեսված են նախագահական ընտրություններ, հիշեցնում է զեկուցագիրը, ընդգծելով, որ «ազատ եւ անաչառ ընտրությունների անցկացումն անհնար է, առանց գաղափարային լրատվության անկախ միջոցների»։

Այդ երկրում մամուլի դեմ ուղղված այդ հարձակումը «եզակի է Արգենտինայում եւ Կենտրոնական Ամերիկայում ավելի քան 10 տարի առաջ ծնունդ առած լրագրողների սպանության արշավներից ի վեր», մանրամասնում է ընդգծեց Լրագրողների պաշտպանության կոմիտեի տնօրեն Ուիլյամ Օռմը, որի կարծիքով, սպանվածների թիվը կարող է 26-ից շատ լինել։

Կոմիտեն ավելացնում է, որ 100-ից ավելի ուրիշ լրագրողներ դատապարտվել են լռության կամ տարագրության։ Կոմիտեն գտնում է, որ սպանությունների մեծ մասի համար պատասխանատու է ժողովրդական ճակատ կիսառազմական կազմակերպությունը, որը պաշտպանում է իշխանության գլուխ գտնվող նախկին կոմունիստական կուսակցությանը։ Կոմիտեն Ռուսաստանին մասամբ մեղավոր է համարում այս իրավիճակի համար, հիշեցնելով, որ 5 միլիոն բնակչություն ունեցող Տաջիկստանում ներկա են 25 հազար ռուս զինվորներ։ Երկու երկրները կապված են ռազմական, տնտեսական եւ դաշնային համագործակցության պայմանագրով։ «Լրագրողների սպանությունների մեծ մասն իրականացվել է ներկայիս կառավարությանը շատ մոտ կանգնած խմբերի կողմից, ոն իշխանությունն իր ձեռքին է պահում միայն Ռուսաստանի տնտեսական ու ռազմական օգնության շնորհիվ», հավաստում է զեկուցագիրը։

ՍՆԱՐՔ-ԻՄԱ ՊՐԵՍ, ՓԱՍՏ, ՖՐԱՆՍ ՊՐԵՍ

ՉԵՉՆԻԱ

Կազակների սպանության համար մեղադրվում են իշխանությունները

[illegible]

ՌՈՒՍԱՍՏԱՆ

«Ելցինի առաքելությունը ավարտված է»

[illegible]

ԹՈՒՐՔԱԿԱՍՏԱՆ

Երկկողմ համաձայնագրեր Թուրքիայի եւ Պակիստանի հետ

[illegible]

ԽՍ

ՀԱՄԱՌՈՏ

Ինգուշիան զենք չի ուղարկում Չեչնիա

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ-ՌԻԱ։ Ինգուշիայի Հանրապետության խորհրդարանը դիմում է հղել Չեչնիայի ժողովրդին, որտեղ վճռական կերպով հերքում է Ինգուշիայի կողմից Չեչնիայի հակամարտող կողմերից որեւէ մեկին զենք փոխանցելու լուրերը։ Այդ լուրերը սադրանք են, որոնց նպատակը չեչեն ու ինգուշ եղբայր ժողովուրդների միջեւ բռնամարտ սերմանելն է։ Ինգուշիայի խորհրդարանը հույս է հայտնել, որ Չեչնիայում առկա հիմնահարցերը կլուծվեն միայն խաղաղ եղանակներով։

1000-անոց ոսկեդրամ՝ Նիյազովի նկարով

ԱՇԳԱԲԱԴ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ-ԻՄԱ ՊՐԵՍ։ Թուրքմենստանի անկախության 2-րդ տարեդարձի կապակցությամբ կենտրոնական բանկը շրջանառության է բաց թողել 1000 մանաթ արժողությամբ ոսկեդրամ։ Նրա երեսի կողմում պատկերված է նախագահ Սափարմուրադ Նիյազովը, իսկ հակառակ կողմում՝ պետական դրոշը։

Վաճառվում է

[illegible] 1 [illegible] 3 սենյականոց 112 ք.մ. [illegible] 1000 ք.մ. [illegible] 2000 ք.մ. [illegible]

Գինը՝ [illegible] 25 [illegible], 13 [illegible]

Զանգահարել 20.30-ից հետո. 45 99 54, 45 41 70

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ

«Ազգի» խմբագրությունը աշխատանքի է հրավիրում [illegible] Բաղրամյան-[illegible] Հանրապետության [illegible] 47 [illegible]

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատապ

Ռամկավար ազատական կուսակցության վերահաստատումը Հայաստանում ունի արդեն չորսամյա պատմություն: Անցած չորս տարիները Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության համար եղան կայացման և ինքնահաստատման դժվարին տարիներ, սալով ցանկալի դեռևս ազատական և ժողովրդավարական գաղափարներով տոգորված համախոհների մի ստվար զանգված, ինչպես նաև նրա շուրջ համախմբվող համակիրների և աջակից կազմակերպությունների դաշնություն: Այս հանգամանքը ինքնին վկայում է, որ ՌԱԿ-ը Հայաստանի քաղաքական կյանքում հանդես չի եկել դիպվածով միայն կամ պատեհապաշտորեն, այլ ժամանակի պահանջով և անհրաժեշտորեն: Իհարկե, կուսակցությունը անմասն չի եղել հանրապետության ընդհանուր ներքաղաքական և ներկուսակցական զարգացումներ- խնդիրներում և ընդդիմացանք նրանց արմատականության դրսևորումներին: ՀՌԱԿ-ը անկախության գործընթացի հենց սկզբից լավագույնս գիտակցում էր, որ անցման շրջանում տնտեսականության կառուցման գործընթացը անհարթ ու անսահման չի լինում, որ քաղաքական զարգացումները կարող են բերել անհարկի բևեռացումների և հակամարտությունների, ինչը չի բխի մեր ազգային շահերից, ավելին կարող է լրջորեն վնասել նրանց: Այդ գիտակցությամբ է, որ մենք ամբողջությամբ մերժում ենք քաղաքական դաշտի ոչ սահմանադրական եղանակները, ակտիվորեն նպաստում քաղաքակիրթ կառուցողական գործելաձևերին, որոնցից հիմնականը համարում ենք դաշտի խորհրդարանական ձևը: Ինչ վերաբերում է միջկուսակցական փոխհարաբերություններին, ապա ՌԱԿ-ը դա համարում է ժողովրդի- կան դաշտի օրըստօրե ընդգծվող ազդեցության տակ և մեծ չափով պայմանավորված են դրանով: Այս պարագայում չափազանց կարևոր է բոլոր չսալ հասարակության բևեռացում: Հայ իրականությունը, նրա ազգային միասնությունն ու հոգեբանությունը հասարակության բևեռացումը կանխող, բայց ոչ բացառող գործոններ են: Միևնույն ժամանակ առկա է ընկերային և տնտեսական դաշտի այնպիսի լարվածություն, որը քաղաքական շահարկումների դեպքում ընդունակ է հանգեցնել թե բևեռացման, թե հակամարտության: Հետևաբար, հասարակական կյանքի առողջացումը բացառելու համար անհրաժեշտ է, որպեսզի մամուլն ու տեղեկատվության այլ միջոցները տեղի-անտեղի չհատակեն աջ և ձախ կարծեցյալ բլոկների խնդիրը, դրանով իսկ արհեստական պատրանք չստեղծեն նրանց իբր թե առճակատման մա-

ՌԱԿ

Քաղաքական հստակ գծի բացակայությո՞ւն, թե ողջախոհություն

րից, սակայն աշխատել է պահպանել իր ավանդական կեցվածքն ու գործելակերպը, զարգացնելով իր ռազմավարությունն ու մարտավարությունը նոր պայմաններին և խնդիրներին համապատասխան:

Ընկերային, տնտեսական և քաղաքական կյանքի այն ծանր փորձությունները, որոնք վերապրում է հայ ժողովուրդը, որոշակի քաղաքական ուժերի կողմնորոշում է դեպի հեղափոխական ռադիկալիզմի (արմատականության) ուղին, որը զգալի արտաքին գործոնների առկայության պայմաններում կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Ռամկավար ազատական կուսակցությունը միշտ մերժել և մերժում է հեղափոխական արմատականությունը որպես քաղաքական գործելակերպ: Մեր ուղեցույցը քաղաքականության մեջ ոչ թե «կամ»-«կամն» է, այլ «և»-«և»-ը:

Այս պարագան հասարակության որոշ շրջաններում, ինչպես նաև որոշ կուսակցությունների մոտ առաջացնում է մի թյուր կարծիք, իբր ռամկավարները դեռևս քաղաքական դեգերումների մեջ են և չունեն հստակ քաղաքական կողմնորոշումներ: Դա չի համապատասխանում իրականությանը: Մենք խորը գիտակցում ենք, որ հասարակական ընթացքների զարգացումները կարող են լրջորեն վտանգվել և խաթարվել, երբ հանրապետությունում չլինի մի ուժ, որը փորձի պահել հավասարակշիռ վիճակ: Այդ խորքով, մենք ընտրեցինք կառուցողական ընդդիմության ուղին, համագործակցելով թե «աջերին», թե «ձախերին» հանրապետության համար կենսական կարևորության կառուցողական ստեղծագործ ներուժը միաբանելու ուղղված քաղաքական գործունեության կարևորագույն պայմաններից մեկը: Որպես փաստարկ կարող է ծառայել ՀՌԱԿ-ի մասնակցությունը դեռևս 1991 թ. ստեղծված ազգային դաշինքին, որի անմիջական ջանքերով խորհրդարանը ընդունեց առանց ԼՂՀ-ի մասնակցության նրա վերաբերյալ որևէ համաձայնագրի ընդունումը բացառող փաստաթուղթը: Սակայն, երբ ազգային դաշինքը փոխեց իր ուղին և նպատակները, գործունեությունը տեղափոխելով խորհրդարանից դուրս, ապա ՀՌԱԿ-ը հեռացավ դաշինքից և իր ուժերի ներածի չափով նպաստեց հասարակության անդորրին ու հավասարակշիռ վիճակը պահելուն: Ընդհանրապես, երբ մեր կուսակցության հարաբերությունները այլ կուսակցությունների հետ վերածվում են համագործակցության, մենք ջանում ենք առավելագույնս դրական ազդել քաղաքական զարգացումների վրա, դրանց տալ բնականոն ու քաղաքակիրթ ընթացք: Այդպես էր նաև «վեցյակի» Սահմանադրության տարբերակի ստեղծման մեր գաղափարն ու ընթացքը: Սահմանադրական այդ տարբերակի ստեղծումը, դրա դրսևորվածությունը խորհրդարանում սկսեց այն արդյունքը, որ ստեղծվեց համատեղ հանձնախումբ, որի գործունեության հիմքում դրվեցին Սահմանադրության նախագծի այլընտրանքային տարբերակներ, և այժմ արդյունավետ աշխատանք է տարվում միասնական նախագծի ստեղծման ուղղությամբ:

Ներկայումս հանրապետությունում ընթացող քաղաքական գործընթացները զսպվում են նախընտրական դաշտի... վին: Այս մտավախությամբ էր, որ Ռամկավար ազատական կուսակցությունը ազգային և պետական խնդիրների լուծման գործընթացների վիճակի մտահոգությունը պատճառելով և դրանց բարելավմանը միտված հինգ կուսակցությունների համատեղ փաստաթղթի ստորագրումից հետո, «Ազգ»-ում հանդես եկավ հստակ հայտարարությամբ, պարզաբանելով, որ համատեղ հայտարարությանը միանալը բխում է կուսակցության քաղաքական դիրքորոշումներից, որ ամենևին էլ միտում չի պարունակում հակադրվել որևէ քաղաքական ուժի կամ խմբավորման: Ինչ վերաբերում է նախընտրական բլոկներին, ապա դրանք կարող են ձևավորվել միայն երկարատև համատեղ գործունեության արդյունքում:

Ցավալի է, որ հանրապետության որոշ քաղաքական ուժեր, նրանց աջակցությամբ դրսում գործող տեղեկատվական միջոցներ կամ չհասկանալով, կամ էլ հասկանալ չցանկանալով փորձում են «չնկատել» ՀՌԱԿ-ի քաղաքական հստակ դիրքորոշումները, գործընթացների բնականոն զարգացմանն ուղղված նրա ավանդական կեցվածքը համարելով քաղաքական հստակ գծի բացակայություն:

Մենք համոզված ենք, որ ներքաղաքական կյանքի այս խառնիխուռն կացության ժամանակ էլ ժողովուրդը ճիշտ կկողմնորոշվի և կուսակցություններին տալով իր գնահատականները կլինի առարկայական, կելնի ազգային և պետական հիմնահարցերի լուծմանն ուղղված նրանց գործունեությունից:

ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԱՆ,
Փիլ. գիտ. թեկնածու

ՄԱՄՈՒԼ

Եթե հայերենը լեզու ունենար, ի՞նչ կասեր...

«Հայաստանի Հանրապետություն», սեպտեմբերի 16, «Օրվա թարգմանությունը», «Ես մեծացել եմ Սիրակուզայի փոքրիկ քաղաքում»:

Այս «օրվա թարգմանությունը» (ռուսերենից) թարգմանական «գլուխգործոց» է: Ռուսերենում հավանորեն եղել է в маленьком городе Сиракузы, թարգմանչուհին ան ընկալել է որպես սեռական հոլովի վերջավորություն, բառն էլ՝ որպես երկրի անուն և թարգմանել՝ «...Սիրակուզայի փոքրիկ քաղաքում»՝ այդ-պես էլ չնկատելով, որ անճշտություն է ստացվում: Իրականում քաղաքը ռուսերենում հենց կոչվում է Сиракузы (ինչպես որ Աթենքը՝ Афины), հայերենում՝ «Սիրակուսե» (նաև «Սիրակուսա», «Սիրակուսք»): Բայց ռուսերենում էլ ըստ երևույթին ժամանակակից Իտալիայի Сиракуза (հայերենում ևս Սիրակուզա) քաղաքը շփոթվել է հին հունական Сиракузы քաղաքի հետ, որտեղ էլ չէր կարող մեծացած լինել Ռոլինդի դերասան Գիոր՝ բերված խոսքի հեղինակը: Եւ այսպես՝ «Ես մեծացել եմ Սիրակուզա փոքրիկ քաղաքում»:

«Հայաստանի հանրապետություն», հունիսի 22. «Ինչո՞ւ ես թռնվել ինձնից», «թռնվելու տեղ չունեմ... Լավ եմ անում՝ թռնվում եմ», «Մեկը համառորեն հեռացնում էր իրենից թռնված ձեռքերը, մյուսը կրկնակի համառությամբ թռնվում էր»:

Ինչո՞ւ «թռնվել» և ոչ թե «թռնել», ի՞նչ վատ է՝ «Ինչո՞ւ ես թռնել ինձնից»: Դո չէր սխալվում Իսահակյանը՝ ասելով. «Ինձնից թռնեցէ՜ք, խորտակվող մարդիկ, ես ժայռի նման կանգնած եմ անուր»: Այնպես որ, բերքը թռնվել է որոշ բաներ չիմանալու մեջ:

«Հայ զինվոր», թիվ 18, օգոստոս. «Եկել ենք այն համոզման, որ նրապաշտպանված է... զինկոմիսարիատներին կից փոքրիկ բաժիններ ստեղծվեն, որ կզբաղվեն սոցիալական ապահովության հարցերով»:

Դժվար չէր ճիշտը գրել. «...նրապաշտպանված է... բաժիններ ստեղծել, որտեղ կզբաղվեն սոցիալական ապահովության հարցերով»:

Նույն տեղում. «Աշխատում ենք մեր ուշադրությունը սևեռել զոհվածների... ընտանիքներին: Նրանցից շատերը բազմազավակ ընտանիքներ են»:

Զոհվածների մասին պետք է ասվեր «տեր էին», ոչ թե «տեր են»:

Իսկ ավելի լավ կլիներ ասել. «Դրանցից շատերը բազմազավակ ընտանիքներ են»:

«Լրագիր», սեպտեմբերի 7. «Մարդիկ հեռիհետ, տարածություններ փայլելով...»:

Տարածությունը չեն փայլում, այլ փայլելով անցնում են, կտրում են:

Նույն տեղում. «Հարցն այնքան էլ նրբանկատ չէ»:

Նրբանկատ, փափկանկատ «չի լինում» մարդը, իսկ հարցը «չի լինում» նուրբ, նրբին, փափուկ:

«Երկիր», սեպտեմբերի 10. «Նախկին բոլոր միջնորդությունները... ձախողվեցին հենց այն պատճառով...»:

«Նախկին»-ից զերադասելի է «նախորդ»-ը:

Նույն տեղում. «Ժողովը որոշեց զարգացնել միության գործընթացը»: Միությունն այնպիսի մի բան չէ, որ գործընթաց ունենա, գործընթաց կարող է ունենալ միավորումը (միավորվելը), համագործակցումը և այլն: «Գործընթացը զարգացնել»-ն էլ ծամծմված արտահայտություն է:

«Երկիր Նաիրի», սեպտեմբերի 9-15. «Որոտացի հեծելով ծնմարիս խլամի դասին...»:

Կոպիտ ռուսաբանություն է: Պետք է լիներ, ասենք «հեծելու համար»:

Նույն տեղում. «Անվտանգության և կասկածամտության դարաշրջանի ավարտի մասին խոսելը դեռ վաղաժամկետ է»:

Ոչ թե «վաղաժամկետ», այլ «վաղաժամ», «վաղ»:

Նույն տեղում. «Հաջորդությունը մաղթենք... ներքին գործերի նախարարության նոր պաշտոնյային ի շահ մեզ բոլորիս և ի շահ ինքն իրեն»:

Էլ ինչո՞ւ «ինքն իրեն», «իրեն»-ը ի՞նչ է:

Լեզվի պետական տեսչություն

Հայաստանաբնակ գիտնականների և ճարտարագետների մրցույթ

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության գիտական հանձնախումբը և Հայ ազնվականների միությունը հայտարարում են գիտատեխնիկական մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել հայաստանաբնակ գիտնականները և ճարտարագետները:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա) Հեղինակների ստացած արտոնագրեր և հեղինակային իրավունքի վկայագրեր (նախկին ԽՍՀՄ, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների կողմից հաստատված) պատճենները.

բ) տեղեկություններ արտոնագրի կամ հեղինակային իրավունքի հեղինակների մասին (ազգանուն, անուն, հայրանուն, հասցեն, աշխատանքի վայրը, գիտական աստիճանը և կոչումները, հեռախոսները),

գ) արտոնագրի կամ հեղինակային իրավունքի բովանդակության և բանաձևի (ֆորմուլի) կրճատ թարգմանությունը անգլերեն:

Հեղինակը կամ հեղինակների խումբը կարող են ներկայացնել մրցույթին նաև մեկ ուղղության կամ բնագավառի գծով արտոնագրերի հեղինակային իրավունքի վկայագրերի շարք:

Նույն հեղինակը կամ հեղինակների խումբը կարող են ներկայացնել նաև տարբեր ուղղությունների կամ բնագավառների գծով արտոնագրեր և հեղինակային իրավունքի վկայագրեր:

Յուրաքանչյուր հեղինակ կարող է մասնակցել մրցույթին տարբեր հեղինակային խմբերի հետ:

Մրցույթի հաղթողներին որոշելու է ժյուրին:

Մրցույթի հաղթողների համար նախատեսվում են դրամական և իրային մրցանակներ:

Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են 1995 թ. մայիսին հանդիսավոր արարողությամբ:

Գործերը ներկայացվում են հեղինակի (կամ հեղինակների) կողմից անձամբ հետևյալ հասցեով

ք. Երևան, Կորյունի 19ա:

Հեռախոսներ՝ 52-85-99, 52-14-95

Գործերն ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից), ժամը 10:00-17:00:

Ներկայացված գործերը, որոնք չեն շահում առաջին մրցույթին, հեղինակների ցանկությամբ կարող են թողնվել հաջորդ տարիներին անցկացվելիք մրցույթներին մասնակցելու համար, քանի որ մրցույթը դառնալու է ավանդական:

Մրցույթին մասնակցելու համար գործերը ներկայացնելու վերջին ժամկետն է 1995 թ. մարտի 31-ը:

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության գիտական հանձնախումբ
Հայ ազնվականների միության խորհուրդ

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»
ռադիոկայան
Ամեն օր ժ. 18-19-ը միջին ալիքով.
1395 կհ հաճախականությամբ և առավոտյան 6:40-7:40
Երևանի քաղաքային ցանցով, երկար և միջին ալիքներով
եթեր են հեռարձակվում «Ազատություն» ռադիոկայանի
հայկական բաժնի ծրագրերը:

ԹԵՔԵՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի ԹՄՄ «Ա. Տիգրանյան» վարժարանի սրտառուչ նվերը Գյումրիի դպրոցին

Երրորդ անընդմեջ տարին է, որ Թեքեյան մշակութային միության Լոս Անջելեսի «Արշակ Տիգրանյան» վարժարանի աշակերտությունը և ուսուցչական կազմը գումար են հավաքում Գյումրիի «Վահան Թեքեյան» դպրոցի իրենց հասակակիցների և գործընկերների համար: Այս անգամ նրանց հանգանակած գումարը տեղ հասցրեց «Ա. Տիգրանյան» վարժարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ ԹՄՄ Կենտրոնական վարչության անդամ Զորք Սանդոսյանը, որն իր տիկնոջ հետ Հայաստան էր ժամանել մասնակցելու ՀԲԸ Միության 78-րդ համագումարին:

Երկուշաբթի, հոկտեմբերի 17-ին մի խումբ թեքեյանցիների ուղեկցությամբ մեկնելով Գյումրի, Զորք Սանդոսյանն անձամբ ծանոթացավ «Վ. Թեքեյան» դպրոցի վիճակին, հանդիպում ունեցավ տնօրենության և ուսուցչական անձնակազմի հետ և պայմանավորվեց նվիրատվության փոխանցման, ըստ աշակերտության վիճակի (երկկողմանի ծնողազուրկ, միակողմանի և ոճաշրջյալ) գումարների հատկացման կարգի շուրջ:

«Համեմատած գոյություն ունեցող կարիքներին, թերևս մեծ չէ մեր վարժարանի աշակերտության և ուսուցչական կազմի հանգանակած գումարը, երևան վերադարձին ասաց նա մեր թղթակցին, սակայն քանի որ այն բացառապես հանգանակվել է մեր աշակերտների ամենօրյա ինքնազրկումով, ասենք՝ օրվա պաղպաղակի կամ շոկոլադի փողը Գյումրիի մեր դպրոցի աշակերտությանը սկզբունքով, այն դաստիարակչական մեծ նշանակություն ունի մեզ համար: Հետևաբար այդ օգնությունը մեր աշակերտներն ու ուսուցիչները փաստորեն անում են իրենց իսկ համար»:

Եւ ահա հոկտեմբերի 24-ին Գյումրիի Վ. Թեքեյանի անվան թիվ 2 դպրոց այցելեցին Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչության ատենապետ Սուլիաս Թորոսյանը, ՀՌԱԿ գրասենյակի վարիչ Վաչագան Գալստյանը և ԹՄՄ Կենտրոնական վարչության ներկայացուցիչ Եղիա Գայանյանը: Նրանք դպրոցի տնօրենությանը փոխանցեցին ԹՄՄ «Ա. Տիգրանյան» վարժարանի աշակերտության և ուսուցչական կազմի խնայողությամբ գոյացած գումարը՝ 995000 դրամ, դպրոցի աշխատակազմին, ուսուցիչներին և աշակերտությանը բաժանելու համար, ըստ պրն. Զ. Սանդոսյանի հետ կայացած պայմանավորվածության: Այցի ընթացքում արծարծվեցին դպրոցի առաջ ծառացած մտահոգիչ մի շարք հարցեր՝ գրենական պիտույքի կարիք, դպրոցաշենքի պայմաններ, ծնողների վարելիք ձեռք բերելու հարց:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ միջազգային

Երկարամյա այն հակամարտությունը, որի ընթացքում Հյուսիսային Կորեան մերթ դուրս էր գալիս միջուկային զենքի չտարածման պայմանագրից, մերթ դադարեցնում դրան իր անդամակցությունը, մերթ միջազգային տեսուչների առջև բացում իր միջուկային օբյեկտները, մերթ էլ դուռը շրխկացնում նրանց քթի առջև, ավարտվեց: Ժնևում ստորագրվեց համաձայնագիր ԱՄՆ-ի և աշխարհի առավել գաղտնիացված երկրի միջև:

զգացող Հարավային Կորեայում տեղակայված են համաձայնագրի ամենախոցելի մասը: Բացի դրանից, այդպես էլ առեղծված է մնում, թե ԿԺԴՀ-ում արդեն քանի միջուկային մարտալիցք է պատրաստվել: Ամերիկյան հետախուզությունը առաջվա պես պնդում է իր այն ենթադրությունը, թե դրանց թիվը հասնում է առնվազն երկուսի: Իսկ դա միանգամայն բավարար է՝ հարկ եղած դեպքին միջուկային ահաբեկման դիմելու համար:

ցել է ժամանակին ակնհայտ ագրեսիայի և գործընկեր դարձել ամերիկացիների հետ վարվող երկխոսության մեջ, որում այսուհետև Հյուսիսային Կորեայում կունենան նախաձեռնության մենաշնորհ: Հարավային Կորեան իր համար անսպասելիորեն ստիպված եղավ ընդունել առանց իր մասնակցության վարված բանակցությունների արդյունքները և այդ «խաչը» կրել առանց վերանայման առանձնահատուկ իրավունքների: Ճապոնիան, որը փոր

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱ

Վաշինգտոնը հաշտվեց Փենյանի հետ

Ռուսաստանն այս անգամ եւս անմասն մնաց

Ակնկալվում է, որ համաձայնագիրը բույլ կտա փարատել Փենյանի միջուկային ծրագրերին վերաբերող կասկածները: Դրան ոչինչ է հաջորդելու Վաշինգտոնի կողմից Հյուսիսային Կորեայի փաստացի դիվանագիտական ճանաչումը և տնտեսական օգնության հաստատումը: Հարավային Կորեան եւս պատրաստ է վերսկսել առեւտրական շփումները ԿԺԴՀ-ի հետ:

Փաստաթուղթը, որը Ժնևում ամերիկացի և հյուսիսկորեացի դիվանագետների հյուծիչ պայքարի արգասիքն է, արժանացավ նախագահ Բիլ Քլինթոնի հիացական գնահատականին: ԿԺԴՀ-ն համաձայնել է կասեցնել միջուկային զենքի չտարածման պայմանագրի պահանջները, սառեցնել գոյություն ունեցող ռեակտորը և միջուկային վառելիքի բափոնները պլուտոնիումի վերածող կայանները, ինչպես նաև աստիճանաբար ոչնչացնել այդ օբյեկտները օտարերկրացիների օգնությամբ, դրանք փոխարինելով արդիական նմուշներով, որոնք տրվող նյութերը ռազմական կարիքներին հասցնելու անընդունակ կլինեն:

Համաձայնագրում կա նաև մի կետ, որի համաձայն, Փենյանը խոստանում է միջազգային տեսուչների առջև բացել Յոնբենի միջուկային համալիրի երկու առավել կասկածելի օբյեկտները: Մինչեւ օրս հյուսիսկորեացիները կտրականապես ընդդիմանում էին դրան: Փորձագետները կարծում են, որ այդ օբյեկտներում պահվում են ռեակտորի բափոնները, որոնց ստուգումը բույլ կտա պարզել, թե Փենյանը միջուկային զենքի պատրաստման համար որքան պլուտոնիում ունի:

Առավել առեղծվածային երևակայությունն այն է, որ համաձայնագիրը հյուսիսկորեացիներին չի պարտավորեցնում անհապաղ բացել այդ օբյեկտները: Կանցնի բերևս հինգ տարի կամ ավելի, մինչեւ որ սարքավորումներ կտեղադրվեն նոր ռեակտորների համար, և գաղտնիքը կպարզվի: Համենայն դեպս, Փենյանը այդ պայմանով է խոստացել բույլատրել հիշյալ օբյեկտների տեսչական ստուգումները:

Հյուսիսից մեծական սպառնալիք

Կա եւս մի հանգամանք, որ կարող է համաձայնագիրը ժամանակի ընթացքում վերածել օճառի պղպջակի: Հյուսիսկորեացիները պատրաստ են ցույց տալ միայն այն, ինչի մասին արդեն հայտնի է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության ոչ այնքան լավատեղյակ տեսուչներին: Բայց ոչ ոք չգիտի, թե ինչ է բաքնված Հյուսիսային Կորեայի ընդերքում և դեռ քանի միջուկային օբյեկտ կարելի է բացահայտել այնտեղ լավ որոնելու դեպքում:

Դիվանագիտական այդ խոշոր հաջողությունը, որով կհնատևանորեն շահագրգռված էին Քլինթոնի վարչակազմը կոնգրեսի ընտրությունների նախօրեին և հյուսիսկորեացիները Կիմ Չեն Իրի պաշտոնականության նախօրեին, բազմաթիվ մեկնաբանություններ է առաջացրել մյուս շահագրգիռ մայրաքաղաքներում, այդ թվում Տոկիոյում: Վաշինգտոնին պաշտպանություն հայտնելով, խոշոր պաշտոնյաների քաղաքական գործիչների հայտարարությունների մակարդակով, ճապոնացիները միաժամանակ նշեցին, որ Ժնևում խաղարկված ձևոնար կումը լուրջ ճեղքումներ մտցրեց վերջերս հաստատված իրողությունների մեջ:

ԿԺԴՀ-ի և ԱՄՆ-ի միջև ձեռք բերված համաձայնությունները մանրակրկիտ մեկնաբանելով, ճապոնացիները հանգում են այն եզրակացության, որ այժմ ստեղծվում են նոր իրողություններ: Փենյանը ստացել է Փենյանի հետ իր շփումներում իմնուրույն գծի հետեւել և հավակնում էր միջնորդի առանձնահատուկ առավելություններին, կրկին հայտնվեց ակամա ֆինանսիստի վիճակում, որը վարկավորում է ուրիշի դիվանագիտական ձեռնարկումները: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, այստեղ վիճակը ամենատխուրն է: Ռուսաստանը ոչ միայն չկարողացավ գլխավոր միջնորդ դառնալ, այլև ստիպված եղավ հաշվից դուրս գրել թե՛ Հյուսիսային Կորեայի հարցին նվիրված վեցակողմ համաժողով անցկացնելու նախաձեռնությունը՝ և թե իր մասնակցությամբ Հյուսիսային Կորեայի միջուկային էներգահամալիրն արդիականացնելու հույսերը, որոնցից ինքը մեծ ակնկալիքներ ուներ:

Ինչպես հայտնի դարձավ, Ժնևում ԱՄՆ-ը և ԿԺԴՀ-ն պայմանավորվել են Հյուսիսային Կորեայի էներգետիկ համակարգը հանդերձավորել այն ռեակտորներով, որով գործում են Հարավային Կորեայում: Հաշվի առնելով բոլոր լրացուցիչ ծախսերը, այդ գործողությունը կդառնա շուրջ 4 միլիարդ դոլլար, որոնք ամերիկացիները մտադիր են հայթայթել շահագրգիռ կողմերից: Ճապոնացիների ասած տեղեկությունների համաձայն, ծախսերի առյուծի բաժինը գումարի կեսից ավելին, կընկնի Սեուլի վրա: Վաշինգտոնը մտադիր է մոտավորապես մեկ միլիարդ դոլլար ստանալ Տոկիոյից:

«Իզվեստիա»

ՀԱՍԱՌՈՏ

Միլաջիչ. Եթե զենք ունենայինք, վաղուց խաղաղություն կլիներ

ՍԱՐԱԵՎՈ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Բոսնիայի վարչապետ Սիլաջիչը հայտարարել է, թե Արեւմտյան Բոսնիայի կառավարական զորամիավորումների տարած հաղթանակները վկայում են, որ երկրի դեմ մտցված զենքի բեռնարգելքը պետք է վերացվի: Նա նշել է, թե այլեւս կասկած չկա, որ մահմեդական ուժերի բանակը կարող է հաղթանակ տանել բոսնիացի սերբերի նկատմամբ, թեեւ վերջիններս իրենցից զգալիորեն լավ են սպառազինված: Նա մասնավորապես ասել է. «Եթե մենք զենք ունենայինք ավելի վաղ, խաղաղությունը վաղուց արդեն հաստատված կլիներ»: Սիլաջիչը նկատի ունի ՄԱԿ-ի կողմից մտցված ներմուծվող զենքի բեռնարգելքը, որով բոսնիական պաշտպանության հակամարտ կողմերին արգելվում էր զենք մատակարարել:

Լոնդոնը կարտաքսի PKK-ի խոսնակին

ԼՈՆԴՈՆ, 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Մեծ Բրիտանիան հայտարարել է, որ երկրից արտաքսելու է PKK-ի խոսնակին՝ Թուրքիայի կառավարության դեմ վերջինիս մղած պայքարի պատճառով: ՆԳՆ խոսնակը նշել է, որ Խ. Յըլմազի ներկայությունը Մեծ Բրիտանիայում չի նպաստում հասարակության բարօրությանը, և նրա արտաքսումը բխում է ազգային անվտանգության շահերից: Նա տեղեկացրել է, որ ծնոթ է բերվել Յըլմազին երկրից հնարավորին չափ շուտ արտաքսելու համաձայնություն: Մեծ Բրիտանիայի ներգաղթի ծառայության պաշտոնյաները Յըլմազին ձերբակալել են հոկտեմբերի 26-ին, երբ վերջինս պատրաստվում էր հանդիպել բրիտանական խորհրդարանի անդամների հետ: Ձերբակալությունը բուռն զայրույթ է հարուցել Բրիտանիայի քրդական համայնքի շրջանակներում: 200 քրդեր հոկտեմբերի 27-ից սկսել են բողոքի ցույց Լոնդոնից դուրս գտնվող այն ոստիկանական շենքի առաջ, ուր գտնվում է Յըլմազը:

ԱՐԵՎԵԼՔ

Դեն Լի. «Չինաստանի միասնությունը վտանգված չէ»

Չինաստանի բազմամյա ղեկավար Դեն Սյաոպինի 52-ամյա դուստրը Դեն Լին, արդեն է հոր մոտ: Նա նկարիչ է, ինչպես նաև զարգացող ծախսի աշխատանքների հեղինակ: Փարիզյան նորաձևության հայտնի օրենսդիրներից մեկի՝ Պիեռ Կարդենի հրավերով Դեն Լին հոկտեմբերին Փարիզում կազմակերպեց իր աշխատանքների առաջին անհատական ցուցահանդեսը: Դեն Սյաոպինը երբեք դեմ չի եղել իր դստեր զբաղ

մունքին, սակայն միաժամանակ կարողացել է կոել նրա բնավորությունը, և իր հաստատակամության համար Դեն Լին պարտական է հորը: 1945–49 թթ. աղջիկն ապրում էր Կարմիր բանակի զորամասերում, որոնց հրամանատարն էր հայրը: Չինաստանում մշակութային հեղափոխության ժամանակաշրջանում 1966–1977 թթ., Դեն Լին արվեստագիտական իր ուսումը ժամանակավորապես ընդհատեց ֆիզիկական աշխատանքներով զբաղվելու համար: Նա դարձավ ազատականներ, առաջ բերի գործարանի բանվորուհի: Դառնալով, իր իսկ բնորոշմամբ «ավանդական և ժամանակակից» նկարիչ, Դեն Լին այսօր իր կտավները վաճառում է 5000, իսկ մետաքսի վրա գործվածքային աշխատանքները՝ 40 հազար դոլլարով: Փարիզյան իր առաջին ցուցահանդեսի առթիվ Դեն Լին փոքրիկ հարցազրույց տվեց «Լը Պոենի» հանդեսին:

– Այսօր ի՞նչ է նշանակում լինել կոմունիստ Չինաստանում:

– Տնտեսական զարգացման և կոմունիզմի միջև անհամատեղելիություն չկա, գաղափարախոսությունն ու տնտեսությունը զուգահեռ երևույթներ են: Կուսակցության գլխավոր խնդրն է բարելավել չին ժողովրդի կենսապայմանները և ապահովել նրա երջանկությունը: Բացի դրանից, Չինաստանում աշխատավարձերի տարբերությունն ավելի փոքր է, քան Արևմուտքում:

– Արևմուտքում ոմանք կարծում են, թե Չինաստանի միասնությունը վտանգված է:

– Դուք եղե՞լ եք Չինաստանում: Եթե լինեիք, ձեր կասկածները կփարատվեին: Չինաստանի միասնությունը բնավ վտանգված չէ: Դա անհեթեթ կարծիք է: Իհարկե, շարունակվում են շրջանների տնտեսական զարգացման տարբերությունները, ինչպես արևմտյան երկրներում: Սակայն միասնացումը նպաստում է շրջանային տարբերությունների հարթմանը:

– Ձեր հայրը 1989 թ. կողմնակից էր Տյանանմենի հրապարակում բողոքների զորացրմանը: Ի՞նչ կարծիքի եք այդ իրադարձությունների մասին:

– Դա անցյալ է: Ես նայում եմ ապագային:

– Էլի ի՞նչ կավելացնեք:

– Չինաստանի ժողովուրդը խաղաղություն է տենչում: Կարևորը է ամեն ինչ անել երկրի քաղաքական կայունությունը պահպանելու և տնտեսական շինարարությունն ավարտին հասցնելու: Ահա թե ինչու 1989 թ. Տյանանմենի հրապարակում ուսանողների ցույցերը վնաս պատճառեցին Չինաստանին: Մենք չենք ուզում արժանանալ Հարավսլավիայի ճակատագրին, երբ երկիրն անկայուն է, առևտրականներն այլևս գործունեություն չեն ծավալում, իսկ նկարիչները չեն նկարում:

ՍԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ԱՄՆ-ը այսուհետեւ էլ կաջակցի Իսրայելին

Ինչպես Վաշինգտոնից հաղորդեց ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, «Նյու Յորք թայմզը» երեկվա համարում գրել է. «Նախագահ Քլինթոնը զբաղված էր մահմեդային դիվանագիտությամբ, հուսալով առաջացնել Իսրայելի եւ Սիրիայի միջեւ խաղաղության հաստատումը: Իր խոսքերով, ինքը մասնավոր զրույցի ընթացքում նախագահ Ասադից ստացել է որոշակի հավաստիացումներ, որոնք կարող են առաջացնել հաշտության բանակցությունների ընթացքը: Սակայն նրան չի հաջողվել Սիրիայի ղեկավարից լսել այնպիսի հայտարարություն, որը կկարողանար մեղմացնել Իսրայելի հասարակայնության երկյուղները»:

Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի ելույթն ըստ էության որեւէ նոր ձայն անտարակելի բան չի պարունակում, հայտարարեց Իսրայելի փոխարտգործնախարար Յոսի Բեյլինը: Դամասկոսում ժամը տասը(?) ամփոփաբար ասած(?) վարչից հետո: Իսրայելի ռադիոյին տված հարցազրույցում Բեյլինը նշեց, որ Սիրիայի նախագահը եւ մյուս դեռ կողմերն անցյալում եւս քանիցս հայտարարել են Իսրայելի հետ հաշտության կնքելու իրենց ձգտման մասին: Բայց սիրիական կողմն այդ ցանկությունն առայժմ չի հաստատել իրական գործողություններով, ընդգծեց նա:

Դամասկոսի հանդիպումից հետո Իսրայելի Կնեսեթում ելույթ ունենալով նախագահ Բիլ Քլինթոնն իսրայելցի նախագահ հավաստիացրեց, թե ԱՄՆ-ը մտներին հավաստիացրեց, թե ԱՄՆ-ը մտներին հավաստ կողմնակիորեն կաջակցի սարես համակողմանիորեն կաջակցի իրենց: Նա հայտարարեց, որ իր երկիրը կձգտի այսուհետեւ էլ հող տանել տարածքի քանում հրեական պետության դիրքերի ամրապնդման մասին: Այդ նպատակով ԱՄՆ-ը Իսրայելին առաջվա պես կտրամադրի տնտեսական օգնություն, նրա մարդու ... զույն տեխնոլոգիա, ամենաարդիական անվտանգությունից, իսրայելցիները կօգնի ստեղծել սեփական հակահրթիռային համակարգ: ԱՄՆ-ի նախագահն ընդգծեց, որ իր երկիրը կձգտի հասնել արաբների կողմից Իսրայելի բոյկոտման լրիվ վերացման, կումեղացնի պայքարը արաբների ահաբեկչության եւ իսլամական արմատականության դեմ: Այդ օգնությունը լիովին համապատասխանում է ԱՄՆ-ի ազգային շահերին:

Իր հերթին Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինը խորհրդարանում ելույթ ունենալով հավաստեց պաղեստինցիների, Սիրիայի, Լիբանանի, արաբական եւ մահմեդական մյուս երկրների հետ հաշտության հասնելու Իսրայելի պատրաստակամությունը: Բայց այդ հաշտությունը, ընդգծեց նա, պետք է հուսալիորեն երաշխավորի Իսրայելի ինքնիշխանությունն ու անվտանգությունը:

ՍԱՏԵԼԻՏ - ՍԵՐՎԻՍ
Առաջարկում ենք արբանյակային հեռուստատեսային անտենաների տեղադրում:
Ապահովում ենք ելքուղական եւ ռուսաստանյան ծրագրերի որակյալ ընդունում:
Հեռ. 57-03-46 ժ. 10.00-ից 17.00-ը
55-12-44,
52-66-33 ժ. 19.00-ից հետո

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Կոմիտաս-125

Կոմիտասի գիսաստղը

Կոմիտասին կարելի է համեմատել հայկական երաժշտության տարածքում [illegible] գիսաստղի հետ: Նա մեր աչքի է [illegible] մեզ, մեր հեռանում: Արդյոք մե՞նք ենք նրան կանչում, թե նա է մեզ կանչում: 1925 թ. Մոսկվայի կոնսերվատորիայի հայ ուսանողներից կազմվեց լարային քառյակ, որին 1931 թ. շնորհվեց հայ դասական Կոմիտասի անունը: Համաշխարհային արվեստի երիտասարդ վարպետ, [illegible] Սարգիս Ասլամազյանը քառյակի համար ձեռնամուխ եղավ Կոմիտասի գրի առած ժողովրդական երգերի ու պարերի մշակումների մի ամբողջ շարքի ստեղծմանը: Այսօր դրանք [illegible]: Այդ մեղեդիների բազմազան մաքրությունն [illegible] է: Ամբողջ [illegible] փայլում է [illegible]: Դրանք [illegible], [illegible], [illegible]: Դրանց [illegible] է հենց այդ [illegible]: Դրանք զուրկ են [illegible], բայց միշտ [illegible]:

Կոմիտաս... Նրա հավաքած ու մշակած երգերը ժողովրդական են, բայց նաեւ անձնական: Դրանք ստեղծագործական բարձր վիճակի արդյունք են: Այն սահմանակցում է պայծառատեսական ներընկալմանը, որը ժողովրդական երգի կոլեկտիվ գիտակցության մեջ «ըմբռնում է» յուրաքանչյուր առանձին դիմանկար, դրանով իսկ կերտելով Կոմիտասի երգերի վիթխարի եւ հավերժական երկրի ընդարձակ պատմական տարածքը:

Այդ երկիրը ողջախոհ է եւ հիասքանչ: Այն չի հանդուրժում պերճանք եւ ցուցամոլություն, կեղծավորություն եւ ամենաթողություն: Դրա ճշմարիտ բաժինն են միայն աշխատանքը եւ կասկածի ու որոնման միջով անցած հոյսով ու հավատով սրբագործված խորհրդածությունը: Միայն վեհ եւ մաքուր մտահղացումները կարող են ստեղծագործական շփում ստեղծել հայկական երաժշտության այդ խորհրդավոր մասունքների հետ, որոնցից են Կոմիտասի մեղեդիները:

Ինչո՞ւ կարողացավ երիտասարդ երաժիշտն այդ հեռավոր տարիներին իր մշակումներում այնքան նրբորեն հաղորդել թե այդ երկրի հուժկու ոգին, թե դրանց նրբագեղությունը, թե վիթխարի էներգիա պարունակող խաբուսիկ փխրածավալությունը եւ թե դրանցում առկա կեցության խոր իմաստնական բերկրանքը:

Ստեղծողի անվիճելի տաղանդով այստեղ գործել է ժամանակը, գիսաստղի աստղային ժամը, որն իր հայտնվելով նշել է Կոմիտասի ժառանգության գիտական ժամկետը եւ հայկական նոր երաժշտության ստեղծման մեջ այն մտցնելու այժմեականությունը: Ի դեպ, հենց այդ տարիներին լույս տեսավ Կոմիտասի երկերի առաջին ժողովածուն Սպիրիդոն Մելիքյանի խմբագրությամբ:

Սարգիս Ասլամազյանը փայլուն կերպով կատարեց իր առաքելությունը, վառ բռնկումով լուսավորելով հայկական գործիքային երաժշտության եւ, ի դեպ, դրա երկու ճյուղերի՝ կոմպոզիտորական ստեղծագործության եւ կատարողական արվեստի հետագա փայլուն ուղին:

Այդ ժամանակվանից Կոմիտասի գիսաստղի հետ սերտ կապ է հաստատված: Հիմա այն կհայտնվի հայկական երաժշտության զարգացման ամենավճռական պահերին:

Սպենդիարյանն իր ստեղծագործության հասուն ժամանակաշրջանում կասի. «Ես բացահայտեցի հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասին, որն այսուհետեւ իմ ուսուցիչներից է...»: Խաչատրյանը եւս կհամակվի Կոմիտասի պատմականությամբ եւ ինտոնացիոն մաքրության գաղափարով եւ երբ կսպառի եռանդը, կմարեն կրքերը, կիջնեն հոգնած ձեռքերը, նա կդիմի Կոմիտասին... Եւ ծնունդ կառնի անզուգական մի երկ՝ «Ալտի մենանվագի սոնատը», որը նրա վերջին ստեղծագործությունն է եւ ողջով առավել կոմիտասական: Դրանից մի քանի տարի առաջ նա ասել էր. «Երբ ես ունկնդրում եմ Կոմիտասի երաժշտությունը, [illegible] ծարավից գզվող ճամփորդի նման հանկարծ հանդիպում եմ աղբյուրի: Անհագ ըմպելու հողում եմ պաղպաջուն աղբյուրի ջրին եւ խմում եմ, խմում, խմում... Այդ աղբյուրը հենց Կոմիտասի երաժշտությունն է: Եւ դրանում որքան ողջախոհություն, մաքրություն, պոեզիա կա»:

Սերգեյ Բալասանյանը եւս, ով իր ամբողջ տաղանդը նվիրաբերեց արեւելյան մեղեդիների սիմֆոնիկ մշակմանը, կյանքի մայրամուտին մենակ մնաց Կոմիտասի հետ եւ ստեղծեց նրա երգերի դաշնամուրային հարյուր մշակում՝ մտադրվելով ստեղծել եւս հարյուրը:

Կոմիտասը լուսավորեց հայկական ամբողջ սիմֆոնիկ երաժշտությունը: 1944 թ. Հարո Ստեփանյանի գրած Առաջին սիմֆոնիայում սիմֆոնիկ ծավալներով կենսագործվեց Կոմիտասի փորձը, բուն հայկական մոնոդիայի մեջ փնտրել զարգացման էներգիա, իսկ հարմոնիկ եւ պոլիֆոնիկ ոճն ստեղծել երկի լադային կառույցի, դրա ինտոնացիոն լեզվի հիման վրա:

Հայկական երաժշտության պատմության մեջ այդ փուլը չափազանց կարեւոր է: Կոմիտասի գաղափարների պատմականությունը շունչ է տալիս ազգային սիմֆոնիզմին: Դրա գլխավոր բեմն են դառնում Հայաստանի ճակատագիրը, ազգային առաքելության իմաստավորումը: Այն ոգեշնչում է կոմպոզիտորների մի ամբողջ համաստեղության սիմֆոնիկ որոնումները, որոնք սիմֆոնիաներով փայլուն կերպով հանդես եկան 50-ական թթ. վերջերին եւ 60-ական թթ. սկզբներին:

Կոմիտասը Բեռլինում. 1896 թ.

«Եւրոպայում կար Բախ, ասում է Էդուարդ Միրզոյանը: Բայց Բախն ուներ նախորդներ: Կոմիտասը դրանք փաստորեն չուներ: Եւ ես կարծում եմ, որ ոչ մի կոմպոզիտոր սեփական երաժշտության համար այնքան շատ բան չի արել, որքան Կոմիտասը»:

Էդուարդ Միրզոյանի սիմֆոնիայում բխում են կոմիտասյան երգարվեստի անսպառ աղբյուրներ: Բացի դրանից, Կոմիտասն այստեղ հառնում է որպես գեղարվեստական ճաշակի, անկեղծության, ռացիոնալիզմի կամերտոն: Սիմֆոնիայի ծրագիրը ծավալուն է, բայց այնտեղ առկա է հենց Կոմիտասի կերպարը:

Ջիվան Տեր-Թադեւոսյանի Առաջին սիմֆոնիայում հայկական սիմֆոնիկ երաժշտության մեջ առաջին անգամ օգտագործված են «Կռունկ» ժողովրդական երգի ինտոնացիաները, որոնք, սակայն, կոմիտասյան ընկալում ունեն, զուսպ են, փիլիսոփայական, ներամփոփ եւ հանդիսավոր:

Էդգար Հովհաննիսյանի ամբողջ Առաջին սիմֆոնիան կառուցված է «Հավիկ» տաղի վրա: Ասես արեւից բխված, ամրացած հավերժական մոնոդիան ի սկզբանե բազմաշերտ է, բազմաձայն եւ պարունակում է սիմֆոնիկ ծրագրեր: Ուստի սիմֆոնիայի բարձրակետի պահին, երբ գալիս է ամփոփման ժամանակը, հնչում է «Հավիկի» լրիվ տեքստը, ինչպես այն ձայնագրել էր ինքը՝ Կոմիտասը: Դա թե խորհրդանիշ է եւ թե իրողություն: «Հավիկը» ծածկագրված սիմֆոնիա է: Հենց դա է հաղորդել Կոմիտասը:

Բայց որքան բազմադեմ է Կոմիտասը, այնքան ժամանակին է հայտնվում նրա գիսաստղը: Երբ երաժշտությունը կարծես թե դեմ է առնում փակուղու, երբ գաղափարներն սկսում են վերստեղծվել, ծագել ասես իներցիայով, երբ կորչում է որոնման խթանը, այն հայտնվում է երաժշտությանը նոր կյանք ներշնչելու համար:

Կոմիտասին եւ նրա ժառանգությունը վերուստին այսպես է իմաստավորում կոմպոզիտորների նոր սերունդը, որն իր մասին հայտարարեց 60-ական թթ. կեսերին: Նրանք սկսում են սկզբից: Երաժշտությունն ասես ծնունդ է առնում լռությունից, որտեղ բաբախում է Կոմիտասի նշանը: Այսպես են ստեղծվում Տիգրան Մանսուրյանի դաշնամուրային ու վոկալ երկերը, ազդարարելով երաժշտական նոր շարժում, որն այնուհետեւ վերածվում է տաղանդների անչափ հետաքրքիր ծաղկաքաղի. Երվանդ Երկանյան, Վահրամ Բաբայան, Ռուբեն Սարգսյան, Աշոտ Զոհրաբյան, Մարտուն Իսրայելյան...

Եւ Կոմիտասի ձայնն այն տարիներին նրանց ստեղծագործության մեջ թվում է էլ ավելի սկզբունքային, [illegible] եւ զորավոր:

Բայց յարդյո՞ք զորավոր: Ավագ սերնդի կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը 1970 թ. գրեց «Անտունի» բալետը, որտեղ նախակերպարը ինքը՝ հայկական երաժշտության Առաջին Մաեստրոն է, տառապյալ ու խենթացած, որի միակ մուսան ժողովրդական երգն էր:

Բազմատաղանդային, պատմական օբերտոններով հարուստ բալետը նվիրված է Կոմիտասին: Եւ այնտեղ առկա է կանխազգացումը պատմության հաջորդ փուլի, այն փորձությունների ողբերգական ընթացքի, որոնց պարբերաբար ենթարկվում է հայ ժողովուրդը:

Այդ տարիներին Կոմիտասի գիսաստղը կրկին մոտենում է մեզ: Նրա առավելությունն ըստ երեւույթին նախազգուշացումն է: Մերթ այս, մերթ այն կոմպոզիտորի երկերում լալով զանգահարվում է «Կռունկը», սգում է «Ծիրանի ծառը», շորորում է «Կաքավիկը», տագնապ է հնչեցնում «Հավիկը» կամ «Մոկաց Միրզան»:

Ավետ Տերտերյանի սիմֆոնիաների ուղին գագաթնակետին հասավ 6-րդ սիմֆոնիայով: Այստեղ լսվում են ձայներ, ավելի ճիշտ, Կոմիտասի երգերի արձագանքներ, ռեչիտատիվ մելոդիկ երգեցողություն, որտեղ զանգի մեջ հնչում է հայոց այբուբենը՝ այբ, բեն, գիմ, դա...

Խորհրդանիշի գաղափարն այստեղ ակնհայտ է: Բայց դրանք ոչ թե մարդկային [illegible] խորհրդանիշներ են, այլ ժողովրդի պատմության, նրա ճակատագրի խորհրդանիշներ:

Առայժմ գիսաստղը հեռանում է, փայլուն հետք թողնելով 80-ական թթ. հայկական երաժշտության երկնակամարում: Գեղարվեստական բուռն երեւակայությունը [illegible] է: Դա կարելի է համեմատել մերթ հսկա ծառի սաղարթի, մերթ արեւի խավարման, մերթ էլ լուսնի սառը լույսի հետ: Մանսուրյանի գործիքային կոնցերտների նվիրական «խոստովանություններում» ասես կարելի է կռահել գիսաստղի նոր հայտնությունը, բայց ոչ, այն հեռանում է մեզանից, [illegible] Կոմիտասի [illegible]բեյյանը, թեեւ շատ է խոսվում միակ ուսուցչի եւ միակ լույսի մասին:

Գոյություն ունի օրինաչափություն. Կոմիտասի գիսաստղը մոտենում է այն ժամանակ, երբ արվեստում հաղթում են մաքուր մտահղացումները, երբ մեր ուղին նեղում են [illegible] ձայները: Պարույր Սեւակ, Մինաս, Փարաջանով, երբ բարու ներգործական [illegible] է կենցաղային [illegible] երկնակամարը, եւ արվեստագետի կերպարը մոտենում է իդեալին, իսկ նրա ձայնը հնչում է պարզ ու հստակ, իսկ ժողովուրդը լսում է նրան:

Կոմիտասի գիսաստղը առանց բարեխոսության չի լինի, այն մոտենում է, երբ մենք արժանի ենք...

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒԽԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

«Պարզապես եւ ընդմեն» ցուցահանդեսի սրահներից

Ինչո՞ւ պարզապես, եւ ընդմեն ո՞ւմ: «Պարզապես եւ ընդմեն» ցուցահանդեսը, որը հոկտեմբերի 21-ից բացված է գրականության եւ արվեստի թանգարանում [illegible] ցուցասրահներում, դրա պատասխանն այդպես էլ չտվեց: Ցուցահանդեսի մասնակիցները Հայաստանի կին գեղանկարիչներն են (բացառությամբ Թբիլիսիում բնակվող Գայանե Խաչատրյանի եւ այժմ Կանադայում բնակվող Անահիտ Աբրահամյանի): Ամենատարբեր սերնդի ու ամենատարբեր ոճերով ստեղծագործող կանայք, որոնց գործերը [illegible] է, բայց [illegible] Արեւիկ Արեւշատյանի այս ցուցադրությամբ (Մոդիլիանի): Արեւիկն ինքն է փորձել նաեւ նկարչուհիներին ու ներկայացվող աշխատանքները: Հեղինակների հետ [illegible] հարցազրույցները [illegible] են [illegible]: Ի դեպ, [illegible], որն անբնդհատ [illegible] է, [illegible] չի ներառվել [illegible], եւ բացի ստեղծագործական աշխարհից ու հարցազրույցներում արված ընդհանրացումներից, կարելի է հաղորդակից լինել նկարչուհիների հոգեբանական վարքին տեսաերիզների [illegible]:

Արծիվն Կոչենց, Քնարիկ Հովհաննիսյան, Լուսիկ Սամիկյան, Անահիտ Աբրահամյան (օֆորտներ), Գայանե Խաչատրյան, Արեւիկ Արեւշատյան, Ալլա Գասպարյան (օբյեկտներ եւ մեկ գեղանկար), Լիլիթ Սողոմոնյան, Անիտա Առաքելյան: Ցուցահանդեսին մասնակցելուց հրաժարվել են Կարինե Մաթեւոսյանը եւ Արմեն Ներկարարյանը՝ վկայակոչելով կանանց առանձին արվեստ ներկայացնելու գաղափարի հետ իրենց անհամաձայնությունը: Գաղափարն ավելի արտառոց է հնչել առավել ավագ սերնդի մասնակիցների համար, ինչն, ըստ արվեստաբան Նազարեթ Կարոյանի, անսպասելի էր. «Թվում է, որ երիտասարդները, ավելի մոտ լինելով տեսալ արվեստին, ավելի վեր պետք է կանգնած լինեին սեռային ստեղծագործության հոգեբանությունից: Արեւիկ Արեւշատյանն, ի դեպ, նույնպես ընդգծում է, որ արվեստի ստեղծագործության դեպքում առկա են սեռային հոգեբանական տարբերակումներ»:

Ինչեւէ, «Պարզապես եւ ընդմեն» գուցե կանխագծի ցուցահանդեսն այցելուների համար բաց կլինի նաեւ այսօր, որից հետո իր «դրամատիկական» արվեստը կփոխադրի այն մասնավոր անձանց ու հեղինակներին, որոնք տրամադրել էին նմուշները:

Ռ. Խ.

ՆՈՐ ԳՐՔԵՐ

Կաֆկայի պատմվածքները հայերեն

«Նաիրի» հրատարակչությունը լույս է ընծայել Ֆրանց Կաֆկայի «Սիրենների լռությունը» պատմվածքների գիրքը՝ Արա Առաքելյանի թարգմանությամբ: Հայ ընթերցողն արդեն ծանոթ է Կաֆկայի խոշոր կտավի ստեղծագործություններին՝ «Դղյակը» եւ «Դատավարությունը» վեպերին, որոնք հրատարակել է «Ապոլոն» հրատարակչությունը: Այս ժողովածուի պատմվածքների զգալի մասն անծանոթ է հայ ընթերցողին եւ հայերեն հրատարակվում է առաջին անգամ: Գիրքը, անշուշտ, նոր լույս կսփռի Կաֆկայի երկբայական աշխարհի եւ նրա ստեղծագործական արվեստի շատ գաղտնիքների վրա: Գրքում ընդգրկված են պատմվածքներ հեղինակի «Դիտումներ», «Գյուղական բժիշկը», «Քաղց տանող մարդը» ժողովածուներից: Գրքում տեղ գտած 30 պատմվածքները հիմնականում ավարտված ստեղծագործություններ են եւ ներկայացնում են Կաֆկայի արձակի լավագույն ընտրանին: Պատմվածքների շարքն են դասվել եւ ժողովածուում որոշակի տեղ ունեն նաեւ ժանրային այնպիսի ձեւեր, ինչպիսին են մանրապատումները, այլաբանական եւ փոխաբերական պատկերները, որոնք այլ կերպ անվանվում են «Կաֆկայի առակներ»: Այս ժողովածուն հատկանշական է նաեւ այն առումով, որ ամփոփում է Կաֆկայի գրեթե բոլոր այն գլխավոր գեղարվեստական փիլիսոփայական բեմանշներն ու մոտիվները, որոնք մարմնավորված եւ զարգացված են գրողի ամբողջ բարդ, խորունկ ստեղծագործության մեջ՝ սկսած «Դիտումներ» ժողովածուի պատմվածքներից մինչեւ «Դղյակը» վեպը.

Գալիք տարում «Նոր» հրատարակչությունը նախատեսել է հայ ընթերցողին մատուցել հեղինակի եւս մեկ գիրք: Այս անգամ Արա Առաքելյանի թարգմանությամբ լույս կտեսնի Ֆրանց Կաֆկայի «Օրագրերը», որոնք առաջին անգամ հայ ընթերցողին կներկայացնեն Կաֆկայի տառապալից ու հիվանդագին ապրումները, մտորումները, ողջ հակասական կյանքը:

ԳՈՀԱՐ ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱԶԴԱԳԻՐ

Օպերայի եւ բալետի թատրոն

Ազգային օպերայի եւ բալետի թատրոնում շարունակվում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի նոր բեմադրության պրեմիերան: Հոկտեմբերի 30-ին, ժ. 14.00-ին, Անուշի դերում հանդես կգա Լիանա Մարյանը:

Կամերային թատրոն

Նոյեմբերի 1-ին, ժամը 16.00-ին, Երեւանի Կամերային թատրոնում կբացվի Հովհաննես Մեծ Գեւորգյանի գեղանկարների ցուցահանդեսը:

Դսեղում հողին կհանձնվի... Թումանյանի սիրտը

Այսօր, ժամը 13-ին, Դսեղում, մասնավոր հողին կհանձնվի Հովհաննես Թումանյանի սիրտը: Արարողությանը ներկա կլինեն ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, մշակույթի նախարար Հ. Մովսեսյանը, ՆԳ նախարար Վ. Սիրադեղյանը, մշակույթի, հասարակական գործիչներ:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Կողոպուտ Սալվադոր Դալիի ցուցահանդեսում

ԵՐԵՎԱՆ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՍ: Միջազգային խուզարկությամբ ավարտվեց Սանկտ Պետերբուրգում անցկացված Սալվադոր Դալիի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ցուցահանդեսի վերջին օրը անհետացավ [illegible] աստվածուհին պատկերող ստեղծագործությունը, որը գնահատվում է 75 հազար դոլար: [illegible] է, թե ինչ պայմաններում է [illegible] ստեղծագործությունը: Ենթադրվում է նաեւ, որ գողացվել է ճշմարիտ ստեղծագործություն, ոչ թե [illegible]:

Իսկ թանգարանի ղեկավարությունը [illegible] է, որ [illegible] Դալիի [illegible] կողքից [illegible] է [illegible] գործ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ **մարզական**

ՀԱՅԱՍՏԱՆ

Վ. Գրիգորյան. «ԽՍՀՄ-ի սպորտի համակարգը ամբողջ աշխարհում լավագույնն էր»

ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի ակտիվի համաժողով

Երեկ հանրապետությունում մարզական ներկայացուցիչների համաժողով չի եղել: Երեկ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճը լեփ լեցուն էր հանրապետության սպորտի ակտիվի ներկայացուցիչներով: Երևան էին ժամանել հանրապետության բոլոր շրջանների ու քաղաքների մարզական պաշտոնյաները: Բոլորին հայտնի է անկախության այս ժամանակում ֆիզկուլտուրայի, սպորտի, երիտասարդության հարցերի վիճակը, որոնց հետագա աշխատանքների բարելավումը: Դահլիճը լեփ լեցուն էր: Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին նաև հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, վարչապետ Հրանտ Բագրատյանը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ, նախարարներ, պաշտոնատար անձինք:

Զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ֆիզկուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերով վարչության պետ Ա. Ավետիսյանը: Խոսելով մեր հանրապետությունում մարզական կյանքի ծանր իրավիճակի և զանգվածային հարցերի մասին նա նշեց, որ սպորտվարչության և ֆեդերացիաների փոխհարաբերությունները բարելավման կարիք ունեն, և ֆեդերացիաները պետք է հավակնեն լինել սպորտվարչությանը: Հոգսոտ հարցերից մեկն է նաև մեր առաջատար մարզիկ մարզիկների և մարզիչների արտագաղթը այլ երկրներ: Վարչության պետը նշեց, որ դրա դեմ պայքարելու համար որոշում է կայացվել մինչև 27 տարեկան մարզիկ մարզիկներին չթույլատրել հանդես գալ այլ երկրներում:

Հետաքրքիր առաջարկություններով և ծանրակշիռ հարցերով հանդես եկավ Գյումրիի սպորտվարչության պետ Վլադիմիր Գրիգորյանը. «Եթե մենք արմատական միջոցառումներ չձեռնարկենք, ապա շատ կանգնելու ենք անդունդի եզրին: Մենք գոնե պետք է ձգտենք պահպանել հինը: Նորի մասին մտածելն անիմաստ է: Մեր սպորտն աղաղակում է: Դրա վառ վկայությունը հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի վերջին առաջնությունն է, որտեղ մեր երկու ըմբիշները աշխարհի չեմպիոններ դարձան տարբեր երկրների, մեկը Հունաստանի, մյուսը Ռուսաստանի դրոշի ներքո: Ուկրաինական ձևերով, կամ մինչև 27 տարեկան մարզիկին արգելելով, որևէ բանի չենք հասնի: Ցանկացած մեկը հեշտությամբ կարող է մեկնել արտասահման, այլ երկրի քաղաքացիություն ստանալ և հանդես գալ իր ուզած դրոշի ներքո, կամ էլ պարզապես հրաժարվել սպորտից: Առաջին հերթին հարկավոր է լուծել սոցիալական հարցերը, որ նրանք չլքեն հանրապետությունը: Մասսայական ֆիզկուլտուրան և մարզադպրոցները բարձիթողի վիճակում են: Փորձը ցույց է տալիս, որ սպորտի համակարգը նախկին ԽՍՀՄ-ում լավագույնն էր ամբողջ աշխարհում: Այսօր մեզ մոտ կառուցվածքային փոփոխություններ են պետք: Գյումրին երկու առաջարկություն ունի.

1. Ստեղծել հանրապետական հանձնաժողով, որը կիրականացնի մարզական կառուցվածքային փոփոխությունները:

2. Խնդրել նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին ԱՊՀ երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ հարց բարձրացնել ստեղծել մարզական խորհուրդ, որը կարողանա տարբեր մարզաձևերից մրցումներ անցկացնել նախկին ԽՍՀՄ-ի տարածքում և նրա օրինակով», ասաց նա:

Հետաքրքիր էր նաև Գերագույն խորհրդի պատգամավոր, առողջության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Սուրեն Սահակյանի ելույթը. «Մինչև հիմա Գերագույն խորհուրդը չի ընդունել ֆիզկուլտուրայի, սպորտի և երիտասարդության մասին օրենք: Միայն օրենսդրական ակտերի միջոցով կառավարությունը կարող է արտահոսքի դեմն առնել: Հանրապետության բյուջեն ստորագրում է Գերագույն խորհուրդը: Ես լավ գիտեմ, որ մեծ միջոցներ են հատկացվում ֆիզկուլտուրայի ու սպորտի համար: Օրինակ, 1993 թ. ղեկավարների ինչպես պահանջել է, այնպես էլ հատկացվել է, և ՀՀ սպորտվարչությունը դա բավարար է համարել: Այլ հարց է, որ այդ միջոցները կորչում են տարբեր օղակներում: Այնպես որ Գերագույն խորհուրդը մեծ ուշադրություն է դարձնում սպորտին»:

Օլիմպիական խաղերի մեր առաջին չեմպիոն և պատվավոր մարզիկների մարզադպրոցի տնօրեն Հրանտ Շահինյանն ասաց, որ երեք ... ֆիզկուլտուրայի և սպորտի համար խնայողություն չպետք է լինի:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը: Ողջունելով համաժողովի կազմակերպման համար, նա նշեց. «Մենք վաղուց ժամանակավրեպ պայքարի կարիք ունենք: Մինչև 1992 թ. մարզական բնագավառում բոլոր թելերը ձգվում էին դեպի կենտրոն, և բնական է ԽՍՀՄ փլուզումից հետո դրանք պետք է խզվեին: Ստեղծվել է նոր վիճակ, նոր պայմաններ, որի համար նոր ծրագրեր են պետք, բայց դրանց մշակումը ձգձգվում է: Կառուցվածքային առումով ՀՀ նախագահը հրամանագիր է պատրաստում սպորտի պետական հսկողության մասին, որը ներառվում է կառավարությունում: Ինչ խոսք, միջոցները սահմանափակ են, սակայն եթե կոնկրետ ծրագրեր ներկայացվեն, հարցերը կլուծվեն: Անհրաժեշտ է նաև գործադիր մարմնի ... Մենք գիտենք, որ ֆուտբոլի վիճակը վատ է, հավաքականը պետք է ... Եվրոպայի առաջնության խաղերին: Ծրագրերի ... անկախությունը հետևողականության է տալիս ... Այդ տեսակետից կարելի է օրինակ բերել ... ֆեդերացիային: Նախագահը և կառավարությունը այս հարցերում օգնելու ... Մենք պետք է ... Միջազգային օլիմպիական կոմիտեի հետ ... մեկը»:

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մրցավազքը երկրորդ տեղի համար շարունակվում է

Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի բարձրագույն խմբի 3-րդ առաջնության ճակատագրի տարերից ... ներքին հանդիպում ... երկրորդ տեղի համար պայքարող ՀՄԸՄ-ն և «Արարատը»: ՀՄԸՄ-ն 5:2 հաշվով առավելության հասավ «Կանազի» նկատմամբ: Ընդ որում, մեկ գոլի հեղինակ դարձավ առաջնության գլխավոր ռմբարկու, ՀՄԸՄ-ի և Հայաստանի հավաքականի հարձակվող Արմեն Ավետիսյանը, որը իր գոլերի թիվը հասցրեց 38-ի: Ի դեպ, դա Հայաստանի առաջնությունների ռեկորդի կրկնությունն է, որի հեղինակն է «Արարատի» հարձակվող Վահե Յաղմուրյանը (1992 թ.): Երևանի «Արարատը» Գորիսում 2:0 հաշվով կարևոր հաղթանակ տարավ տեղի «Զանգեզուրի» նկատմամբ, որը պայքար է մղում բարձրագույն խմբում իր տեղը պահպանելու համար: Նույն հաջողության հասավ և էջմիածնի «ԲՄԱ Արայի» թիմը, որը սեփական հարկի տակ հյուրընկալել էր ... Գյումրիի «Շիրակին»: Խոշոր հաշիվ էր, բայց դաշտի տերերը կարողացան վաստակել ... միավոր: Այնպես որ ... պայքար է ընթանում նաև վտանգավոր գոտում գտնվող թիմերի միջև: «Զանգեզուրը» հավանաբար գործնականում ապահովել է իր տեղը ... խմբում: Սակայն մրցաշարային աղյուսակի «Վանը», «Նաիրիտը», «Լոռին» և «ԲՄԱ Արայի»-ն դեռ պետք է պայքարեն այդ իրավունքի համար: Իսկ «Կանազի» ճակատագիրը արդեն որոշված է: Թիմը շատ անհաջող հանդես եկավ առաջնությունում և պետք է հրաժեշտ տա բարձրագույն խմբին: Հիշեցնենք, որ բարձրագույն խմբին հրաժեշտ են տալու 4 թիմեր, որոնց փոխարինելու է 1-ին խմբում 1-ին տեղ գրաված Գյումրիի «Արագածը»:

Մրցաշարային աղյուսակը հոկտեմբերի 29-ի դրությամբ

							Սեփական դաշտում						Մրցակցի դաշտում					
	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	27	24	3	0	81-17	51	14	13	1	0	48-11	27	13	11	2	0	33-6	24
2. ՀՄԸՄ	26	22	0	4	108-22	44	13	12	0	1	68-7	24	13	10	0	3	40-15	20
3. Արարատ	24	17	5	2	89-16	39	13	11	1	1	63-9	23	11	6	4	1	26-7	16
4. Բանանց	26	16	1	9	88-47	33	13	9	1	3	59-19	19	13	7	0	6	29-28	14
5. ՀԱՄ ՖԻԱՍ	26	13	6	7	59-42	32	13	8	2	3	35-19	18	13	5	4	4	24-23	14
6. Կոտայք	26	12	3	11	70-45	27	13	8	3	2	40-14	19	13	4	0	9	30-31	8
7. Ցեմենտ	25	10	6	9	47-42	26	12	8	1	3	25-15	17	13	2	5	6	22-27	9
8. Ազնավուր	25	10	3	12	38-66	23	12	8	1	3	26-22	17	13	2	2	9	12-44	6
9. Երազանք	26	8	5	13	24-48	21	14	4	5	5	11-17	13	12	4	0	8	13-31	8
10. Զանգեզուր	26	8	4	14	22-72	20	13	6	2	5	15-15	14	13	2	2	9	7-57	6
11. Վան	26	8	3	15	32-71	19	13	5	2	6	18-38	12	13	3	1	9	14-33	7
12. Նաիրիտ	26	5	6	15	16-41	16	14	4	3	7	13-17	11	12	1	3	8	3-24	5
13. Լոռի	26	5	6	5	21-57	16	13	3	3	7	10-18	9	13	2	3	8	11-39	7
14. ԲՄԱ Արայի	25	5	5	15	34-72	15	11	3	3	5	18-24	9	14	2	2	10	16-48	6
15. Կանազ	26	1	2	23	14-85	4	12	0	1	11	10-39	1	14	1	1	12	4-46	3

ՈՒԵՖԱ

Բոյաջյանի վերջին ելույթները

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ,
Վալանս, Ֆրանսիա

Գիտե՞ք, որ 1988 թ. Սեուլի օլիմպիական խաղերում Ֆրանսիայի ջրագնդակի հավաքականում կար հայազգի մի խաղացող Բռունո Բոյաջյան անունով: Նա 36 տարեկան է, ծնված Վալանս հայաշատ քաղաքում: Նրա հայրը` Ջորջ Բոյաջյանը, եղել է Ֆրանսիայի լողի չեմպիոն, միաժամանակ տարիներ շարունակ լինելով Վալանս քաղաքի լողավազանի տնօրենը: Ջորջ Բոյաջյանը հիմա Վալանսի քաղաքապետարանում վարում է մարզական և սոցիալական խնդիրների խորհրդատուի պաշտոնը: Շատ մոտ լինելով հայկական իր ծագմանը, Ջորջ Բոյաջյանի որդին Բռունոն, նույնպես մոտ է իր արմատներին և անձն առիթով այդ մասին հիշեցնում է լրագրողներին:

Բռունո Բոյաջյանն ինքնատիպ ոճ ունի: Նա Մարսելի CN թիմի կազմում 7 անգամ դարձել է Ֆրանսիայի չեմպիոն: 1981 թ.-ից մինչև 1988 թ.թ. Բռունոն հանդես է եկել Ֆրանսիայի հավաքականում:

Այսօր Բռունո Բոյաջյանը, որ խաղում է Ֆրանսիայի հյուսիսում գտնվող Տուրկոեն քաղաքի «Նեպտուն» թիմում, խորհում է մոտ ժամանակներս վերջ տալ իր հաջողակ մարզական գործունեությանը: Բռունո Բոյաջյանը, որը մի քանի տարի շարունակ հաղթել է Ֆրանսիայի առաջնությունների ամենաառաջ ջրագնդորդը, պետք է փորձի «Նեպտուն» թիմին հասցնել առաջատարների կարգին:

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

Նորից Մարադոնան

Արդեն մի քանի ամիս է, որ չէր խոսվում Դիեգո Մարադոնայի մասին: Ու՞ր էր նա: Վերջերս նրա հետքը հայտնաբերվեց: Մարադոնան Բուենոս Այրեսից 800 կմ հյուսիս գտնվող Կորիենտես քաղաքում դարձել է տեղի «Դեպորտիվո Մանդիյուին» թիմի պաշտոնական մարզիչը մնում է Կարլոս Ֆրենը: Միաժամանակ, ըստ ՖԻՖԱ-ի, Մարադոնային արգելվել է որևէ պաշտոն ունենալ ֆուտբոլում: Սակայն ՖԻՖԱ-ն Նյու Յորքում պետք է քննի Մարադոնայի հարցը, որը

Մարադոնան մարզիչ

թիմի մարզիչ, որը Արգենտինայի առաջնությունում բոլորում է վերջին տեղերում: Ըստ Դիեգոյի եղբոր, «ամեն ինչ կարգին», այդպես են անվանում Մարադոնային, հայտնի ֆուտբոլիստ եկել է անմիջապես մարզելու այս թիմը: Բայց Դիեգոյի զայրույթ հարուցելու չեղավ, և թիմը նորից կպարտվի հանդիպումներում պարտություններ կրեց նախանցյալ աղյուսակի խորքերը: Ըստ Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիայի օրենքների, Դիեգո Մարադոնան պետք է երկու տարի մարզի մի թիմ, որ իրավունք ստանա դրդի կարգավիճակ պաշտոնապես: Այնպես որ, «Դեպորտիվո չի կարող հրաժարվել ֆուտբոլից, նույնիսկ, եթե ֆուտբոլն արդեն փոքր հրաժարվել է նրա ից իր բազմաթիվ, բայց աշխույժ զավակից: Վերջերս Մարադոնան մասնակցեց բարեգործական մի խաղի: Այն կազմակերպել էր Արգենտինայի հավաքականի նախկին դարպասապահ Ռիքարդո Ֆիլլոլը: Հանդիպմանը մասնակցեցին նաև Արգենտինայի հավաքականի մի քանի նախկին խաղացողներ: Մարադոնան գոլ չխփեց, սակայն խաղադաշտում ցուցաբերած հնարքների շնորհիվ բազմիցս արժանացավ հանդիսատեսների ծափահարություններին: Գ. Ա.

ԵՎՐՈ-96

ՈՒԵՖԱ-ն պատժեց Ադրբեջանին

Հոկտեմբերի 21-ին Ցյուրիխում տեղի ունեցած իր վերջին ժողովում ՈՒԵՖԱ-ն, քննելով Ադրբեջանի քաղաքական կացությունը, որոշեց, որ եթե մինչև հոկտեմբերի 28-ն այս երկրում հայտարարված արտակարգ դրությանը վերջ չտրվի, ապա Ադրբեջանի հավաքականը Եվրոպայի առաջնության սեփական հարկի տակ խաղերը պետք է անցկացնի Ադրբեջանից դուրս մի քաղաքում, որը գտնվում է նախկին ԽՍՀՄ տերիտորիայի տարածքում: «Անկարելի է, որ Եվրոպա 96-ի որակավորման որևէ խաղ անցկացվի մի անապահով երկրում», ասվում է ՈՒԵՖԱ-ի կոմյունիկեում: Ինչպես հայտնի է, Ադրբեջանում դեռ շարունակվում է արտակարգ դրությունը, իսկ ՈՒԵՖԱ-ի սահմանված ժամկետն էլ լրացել է երեկ: Դա նշանակում է, որ Ադրբեջանի հավաքականը ընտրական փուլի իր խաղերը պետք է անցկացնի դրսում: Նոյեմբերի 11-ին և դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի հավաքականը պետք է ընդունի՝ ներ համապատասխանաբար Իսրայելի և Ֆրանսիայի հավաքականներին: Այդ խաղերն անցկացնելու համար Ադրբեջան պետք է մի երկիր գտնի, որը համաձայն կլինի ընդունել իր հավաքականին: Ըստ եվրոպական մամուլի, այս խնդիրը դժվար կլինի, քանի որ Ադրբեջանի հավաքական կամ ... իր հարևաններից` Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի հետ բարդ են: Եթե Ադրբեջանի հավաքականը ցանկանա խաղալ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից որևէ մեկի եվրոպական մի հողատարածությունում, որտեղ կլիմայական պայմաններ բարենպաստ չեն, ապա շատ դժվար կլինի խաղը կազմակերպել: Հավանաբար Ադրբեջանը փորձի հանդիպումները կազմակերպել Մոլդովայի կամ Ուկրաինայի հարավում, մասնավորապես Օդեսայում կամ Սիմֆերոպոլում: Առաջիկա շաբաթվա ընթացքում այս հարցը պետք է վերջնական լուծում ստանա: Գ. Ա.

digitised by A.R.A.R.@

ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (UNISEF-Ի) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքական, տնտեսական եւ սոցիալական արագ վերակառուցման ժամանակաշրջանում ՀՀ եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի միջեւ համագործակցությունը 1994 թ. ընթացքում ուղղված է երեխաների առողջ զարգացման հեռանկարին։ Նախընտրությունը տրվում է պաշտպանելու այն զգալի առաջադիմությունը, որը առկա է երեխաների առողջության եւ կրթության բնագավառներում եւ ամրացնելու սոցիալական ինֆրաստրուկտուրայի ամենաթույլ կողմերը։

Համագործակցության անցողային փուլում, երբ անհապաղ օգնությանը կհաջորդի երկարաժամկետ համագործակցությունը, ծրագրերի հիմնական շեշտը դրվել է դրվի ազգային գործողության պլանի մշակմանն օժանդակելու վրա։ ՅՈՒՆԻՍԵՖ-ը ՀՀ Կառավարության հետ համատեղ կասարել է Հայաստանում կանանց եւ երեխաների իրավիճակի վերլուծություն։ 1994 թ. հուլիսին Գյումրի քաղաքում անցկացվեց մինչեւ հինգ տարեկան երեխա ունեցող ընտանիքների հարցում, որի նպատակն էր ի հայտ բերել առողջապահական ծառայությունների աշխատանքի դրական եւ բացասական կողմերը եւ գնահատել նրանց արդյունավետությունը։ Այդ հարցման հիման վրա կատարվեց բուժման նոր մեթոդների վերլուծական հետազոտություն։ Այս աշխատությունները հիմք կծառայեն Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի հինգ տարվա (1995-1999 թթ.) գործունեության ծրագրի պլանավորման եւ ՀՀ կառավարության ազգային գործողության պլանի մշակման համար։

Մայրական եւ մանկական առողջապահության (ՄՄԱ)

Օգնությունը մայրական եւ մանկական առողջապահության (ՄՄԱ) բնագավառում սկսվեց դեղորայքի եւ հիմնական բժշկական սարքավորումների անհապաղ առաքումից, որի նպատակն է որոշ չափով ծածկել այդ նյութերի խիստ պակասը եւ օժանդակել առաջնային բուժծառայության հաստատություններին։ Այս նպատակով 1994 թ. պոլիկլինիկաներ եւ ծննդատներ առաքվել են տարբեր տեսակի հիմնական սարքավորումներ եւ դեղորայք պարունակող հավաքածուներ ընդհանուր քաշով մոտ 100 տոննա։ Հղի կանանց մոտ անեմիայի դեմ պայքարի համար բերվել է 700 հավաքածու տարբեր վիտամիններով։

Պատվաստման լայնածավալ ծրագիր

Պատվաստման լայնածավալ ծրագրի իրականացման շրջանակներում Հայաստան են առաքվել հետեւյալ տեսակի պատվաստանյութեր՝ 300.000 դոզա պոլիո, 300.000 դոզա դիֆտերիայի, կապույտ հազի եւ փայտացման, 100.000 դիֆտերիա եւ փայտացում, 45.000 դոզա կարմրուկ, 55.000 պալարախտ (տուբերկուլյոզ), ներարկիչներ եւ ասեղներ, պատվաստելու համար։ Հայաստանում 1994 թ. դիֆտերիայի համաճարակը վերահսկելու նպատակով շուտափույթ առաքվեց հավելյալ անհրաժեշտ քանակի պատվաստանյութ։ Սառցե շղթայի անխափան աշխատանքը ապահովելու համար հանրապետությունը ստացել է էլեկտրական եւ պետրոլային էներգիա (գազ) օգտագործող 99 սառցարան, 10 սառնարան անհրաժեշտ պահեստամասերով, ինչպես նաեւ 500 պայուսակ պատվաստանյութ փոխադրելու համար։ Առողջապահության նախարարության հետ համատեղ անց են կացվել մի շարք սեմինարներ նվիրված պատվաստման լայնածավալ ծրագրի խնդիրներին։

Դիարեային (փորլուծության) եւ սուր ռեսպիրատոր հիվանդությունների հսկողություն

Վերոհիշյալ հիվանդությունների քանակը նվազեցնելու միտումով կիրառվել են հետեւյալ միջոցները։

- Հանրապետություն առաքվել է 600.000 փաթեթ օրհիդրոն, դեղորայքի եւ հիմնական բուժմիջոցներ պարունակող 260 հավաքածու՝ սուր ռեսպիրատոր հիվանդությունների բուժման համար։
- Համաշխարհային առողջապահության կազմակերպության եւ Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի հետ համատեղ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը կազմակերպել է մեկ ամսվա տեւողությամբ սեմինար նվիրված դիարեային (փորլուծության) եւ սուր ռեսպիրատոր հիվանդությունների հսկողությանը։

Բնական սնուցման ծրագիր

Մանուկների առողջական վիճակը բարելավելու համար Մանկական Հիմնադրամը նախաձեռնեց բնական, այսինքն մայրական կաթով, սնուցման ծրագիրը, որը ընդունվել է որպես Հայաստանի ազգային ծրագիր։ Հանրապետության ծննդատներում նոր մոտեցումները ներդնելու եւ դրա մանկանը բարեհամբույր վերաբերմունքի ծննդատների նախաձեռնությունը իրականացնելու համար բոլոր շրջաններում ՅՈՒՆԻՍԵՖ-ը կազմակերպեց սեմինարներ նվիրված բնական սնուցմանը, ընդգրկելով ավելի քան 400 բուժաշխատող։*

Օգնություն առավել դժվարին պայմաններում գտնվող երեխաներին

Հայաստանի բոլոր գիշերօթիկ դպրոցներ եւ մանկատներ (64 հաստատություն, մոտ 10.000 երեխա) պետք է առաքվի վառելիք ձմեռվա հոգսերը թեթեւացնելու համար բաժանվում է 10.000 անկողնային սպիտակեղենի հավաքածու։

Քանզի Յունիսեֆի բոլոր գործողությունները ուղղված են օժանդակելու ՀՀ Կառավարության ազգային ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից հրավիրվել են մի շարք խորհրդատուներ հետեւյալ բնագավառներում՝ սառցե շղթա, ջրի մատակարարում եւ հիգիենա, ջրի պակաս եւ աղի հավասարակշռության դիզացում, լուսավորություն։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միացյալ Նահանգների լրատվական ծառայությունը եւ ՀՀ լուսավորության նախարարությունը հայտարարում են «Ազատության աջակցություն» երիտասարդության փոխանակման ծրագրի համար աշակերտների գրանցման եւ ընտրության սկիզբը։ «Ազատության աջակցություն» երիտասարդության փոխանակման («Բրեդլի») ծրագիրը միջնակարգ դպրոցների այն աշակերտների համար է, ովքեր տիրապետում են անգլերեն լեզվին, լավ առաջադիմություն ունեն դպրոցում եւ օժտված են հաջողակ փոխանակման աշակերտ լինելու բոլոր անհրաժեշտ հատկություններով։ Երրորդ տարին է արդեն, որ այս ծրագրի համար ընտրված աշակերտները կապրեն ամերիկյան հյուրընկալ ընտանիքներում եւ մոտ մի տարի (1995 թվի օգոստոսից 1996-ի հունիսը) կհաճախեն ամերիկյան դպրոցներ։

«Ազատության աջակցություն» երիտասարդության փոխանակման ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող աշակերտները պետք է.

- տվյալ ժամանակ լինեն Հայաստանում միջնակարգ դպրոցի 8-րդ, 9-րդ կամ 10-րդ դասարանի աշակերտներ,
- ծնված լինեն 1978 թվի հունիսի 1-ից 1980 թվի սեպտեմբերի 1-ը ժամանակահատվածում,
- վերջին երկու տարվա ընթացքում ցույց տված լինեն բարձր առաջադիմություն։ (Այն աշակերտները, ում ընտանիքի անդամներից գոնե մեկը վերջերս դիմել է ԱՄՆ-ի վիզայի, եւ նրանք, ովքեր վերջին 5 տարվա ընթացքում երեք ամսից ավելի եղել են ԱՄՆ-ում, չեն կարող դիմել ծրագրին)։

Աշակերտները, ովքեր ուզում են դիմել ծրագրին, կարող են գրանցվել հետեւյալ 4 վայրերից մեկում, նշված օրը

Գյումրի. հոկտեմբերի 17-ին, ժամը 10:00,
Գեղամ Սարյանի անվան թիվ 24 դպրոցում։
Վանաձոր. հոկտեմբերի 19-ին, ժամը 10:00,
Վանաձորի թիվ 1 հանրակրթական վարժարանում։
Սիսիան հոկտեմբերի 25-ին, ժամը 13:00,
Սիսիանի հանրակրթական կոլեջում։
Երեւան հոկտեմբերի 29-ին եւ 30-ին, ժամը 8:30,
Երեւանի Ամերիկյան համալսարանում։

Գրանցման ժամանակ պետք է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը

- ծննդյան վկայական կամ անձնագիր` մեկ պատճենով։
- դպրոցի վերջին երկու տարվա գնահատականները դպրոցի կնիքով եւ տնօրենի ստորագրությամբ (մեկ պատճենով)։
- երկու անձնագրի լուսանկարի չափսի լուսանկար։

Գրանցման ավարտից հետո աշակերտները կտեղեկացվեն անգլերեն լեզվի քննության տեղի ու ժամանակի մասին։ Անգլերենի քննությունն ու շարադրությունը անցած աշակերտները կլրացնեն ծավալուն մի դիմում։ Հետո նրանց հետ կանցկացվի պաշտոնական հարցազրույց։ Կիսաեզրափակիչ փուլի հաղթողները կընտրվեն այս արդյունքների հիման վրա։ Վերջին ընտրությունը կանցկացվի ԱՄՆ-ում։ Ուորլդ Լերնինգը աշխարհի ամենախոշոր ու ամենահին փոխանակության զբաղվող կազմակերպություններից մեկը, Միացյալ Նահանգների լրատվական ծառայության հետ համատեղ կավարտի ընտրությունը։ Կիսաեզրափակիչ փուլը հաղթողների թղթերը կվերանայի մասնագիտացած ուսուցիչների մի խումբ ԱՄՆ-ում։ Հաղթողները կհայտարարվեն 1995 թ. մայիսի 1-ից հետո։

ԽՈՒՍԱՓԵՔ ՇՇՈՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒՑ
ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱ՛ՅՆ ՄԱՅՐԱԿԱՆ ԿԱԹ 4-ԻՑ 6 ԱՄԻՍ



Ո՛չ շշով կաթ, ո՛չ ջուր, ո՛չ թեյ, ո՛չ հյութ։ Ո՛չ մի ուրիշ սնունդ բացի մայրական կաթից։

Այսպիսով կպաշտպանեք երեխային վարակիչներից։ Մոր կաթը միակ սնունդն է, որն անհրաժեշտ է երեխայի կյանքի առաջին չորսից վեց ամիսներին։ Կերակրեք հաճախ։

Հետեւե՛ք ցուցումներին՝ կհասնեք հաջողության

Կերակրեք ծննդաբերությունից անմիջապես հետո՝ առաջին կես ժամվա ընթացքում։

Սկսեք կրծքով կերակրել ծննդաբերությունից անմիջապես հետո՝ կես ժամվա ընթացքում, հենց ծնարանում։ Որքան շուտ, այնքան լավ։

Ռեժիմով մի՛ կերակրեք։ Կերակրեք ցորեկը եւ գիշերը։ Հաճախ կերակրեք։ Հաճախակի կերակրումները կպաշտպանեն կաթնարտադրությանը։

Հիվանդանոցում երեխային միշտ ձեր սենյակում պահեք։ Այսպիսով կարող եք հաճախ կերակրել թե՛ ցերեկը եւ թե՛ գիշերը։

Մի՛ մտահոգվեք կաթի քանակի ու որակի համար։

Մի՛ մտահոգվեք, որ աղքատիկ սնունդը կվնասի ձեր կաթնարտադրությանը։ Նույնիսկ քիչ սնվելով դուք երեխային կպահովեք բավարար սննդարար կաթով։



Կրծքով կերակրելու նոր ցուցումների գրքույկը ձեռք բերելու համար դիմեք ձեր շրջանի պոլիկլինիկա

A STYLE 58.18.41

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Թողարկ 1899. Տպաքանակ՝ 5000. Ստորագրված է տպագրության՝ 27. 10. 1994. Գինը՝ 10 դրամ

digitised by A.R.A.R.@